№ 214 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3

1906

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3 № 214

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կոստանդին և Պետրոս Ջումշուդ-Բէգեան Մելիք-Շահնազարեանները իրանց քոյրերի՝ Սօֆիա Լօսիեվի և Աննա Օհանեանի հետ խորին վշտով գուժում են ազգականներին և ծանօթներին իրանց քրոջ որդի՝

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ ՀԱԽՈՒՄԵԱՆԻ

և նրա ամուսնու Եկատերինէի եղեռնական մահը, որ տեղի է ունեցել Շուշում, հոկտեմբերի 1-ին գիշերը:

Այսօր, երեքշաբթի, հոկտեմբերի 3-ին, թաղման օրը Զգրաշէնի եկեղեցում կատարվելու է պատարագ:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ ՀԱԽՈՒՄԵԱՆԸ իր ամուսնու ԵԿԱՏԵՐԻՆԷ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ հետ Շուշում սպանված են,

վշտաբեկ հօրաքոյրը ԶԱՐՈՒՀԻ ՆԱԶԱՐԵԱՆ իր որդի Տիգրան Նազարեանի և քրոջ զաւակների՝ Հռիփսիմէ Թումայեանի, Գայիանէ Խունունցի հետ գուժում է սև բօթը ազգականներին:

Այսօր, երեքշաբթի, հոկտեմբերի 3-ին, թաղման օրը, Զգրաշէնի եկեղեցում կը կատարվի պատարագ առ. 11 ժ.:

Յարութիւն Սիմօնեան Բարսամեանը իր որդկերանցով, Եղիսաբէթ Սիմօնեան Միչեանը և Լևոն Սիմօնեան Բարսամեանը յայտնում են ազգականներին և ծանօթներին առաջինը իր սիրելի ամուսնու, երկրորդները մօր, իսկ վերջինները հարսի՝

ՍՕՖԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԲԱՐՍԱՄԵԱՆԻ

մահը: Հոգեհանգիստը այսօր, հոկտեմբերի 3-ին, երեկոյեան ժամը 6-ին: Մարմնի յուղարկաւորութիւնը չորեքշաբթի, հոկտեմբերի 4-ին, առաւօտեան 10 ժամին, իր բնակարանից (Ալէքսէեվսկի փողոց տ. № 7) դէպի Կուկիայի ս. Աստուածածին եկեղեցին (Վօրօնցովի արձանի մօտ): Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 1—1

Այրի Թագուհի Ջանփոլադեան իր զաւակներով յայտնում են իրանց խորին շնորհակալութիւնը այն անձանց, որոնք անձամբ, հեռագրներով և նամակներով յայտնեցին իրանց ցաւակցութիւնը իրանց թանգագին ամուսնու և հօր՝

ԶԱՔԱՐԵԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՋԱՆՓՈԼԱԴԵԱՆԻ

եղեռնական մահվան առիթով: 1—1

ԿՈՂԲԻ ԱՂԱՀԱՆՔԻ ԿԱՊԱԼԱՌՈՒ

ԶԱՔԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՋԱՆՓՈԼԱԴԵԱՆԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ

յայտարարում են ի գիտութիւն

ԱՂ ԳՆՈՂՆԵՐԻՆ,

որ ժամանակաւոր, ցնոր կարգադրութիւն, աղի պատէրները ընդունվում են Կողբում: Նամակները և դրամը պէտք է ղրկել այս հասցէով՝ Сел. Кульпъ, Беминэ Захарьевнѣ Джанполадовой.

3-ին. 5-ին և 8-ին 1—2

Բացված է բաժանորդագրութիւն

„ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ“

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որը լոյս կը տեսնէ հոկտեմբերի 7-ից:

«Երկրի Ձայնը» զբաղվելու է մասնաւորապէս Թիւրքահայ կեանքով և Թիւրքահայկական հարցով: Նա ձգտելու է ստեղծել հայ-թիւրքական համերաշխութիւն:

Տարեկան բաժանորդագինն է. Թիֆլիսում 3 ր. 50 կ., գաւառներում 4 ր., արտասահմանում 12 ֆրանկ:

Հոկտեմբերից մինչև տարվայ վերջը 1 րուբլի:

Բաժանորդագրութեան համար դիմել՝ Тифлисъ, редакція «Еркри Дзайнъ», Грибоѣдовская № 16, д. Зубалова, կամ Tiflis, rédaction de l'«Erkri Dzaïn», Griboedovskaya, № 16. կամ «Գուտտենբերգ» գրավաճառանոցին:

տռ. 3—5

ԿԱՆԱՆՑ ԿԼԻՆԻԿԱՅԻ

պրօֆ. Սնեգիրեվի նախկին օրդինատօր

ԲԺԻՇԿ

Դ. Ն. ԱԹԱԲԷԳԵԱՆ

Ընդունում է կանացի և մանկաբարձական հիւանդութիւն ունեցողներին Մօսկվայում: Խորհրդակցութիւնը պրօֆէսօրների մասնակցութեամբ: Հասցէն՝ Тверская, Козицкій пер., д. Бахрушина, кв. 230.

տռ. 5—10

ԲԺԻՇԿ

Մ. ՄՈՎՍԻՍԵԱՆ

Ներքին ու երեխայոց հիւանդութիւնների

Ընդունում է առաւ. 9—11 ժ. երեկ. 5—7 ժ., Ելիզավետինսկայա փողոց տուն № 21.

տռ. (ա. օ.) 3—10

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ և ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

Ընտանիքներում

Ա. Մ. ԵԶԵԿԵԱՆ

Հասցէն բանակցութեան համար՝ Ул. Петра Великаго (бывш. Лабораторная) № 21:

տռ. 20—20

Ա. ՄԵԼԻՔ-ԱԼԱՀՎԵՐԴԵԱՆ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ և ՄԱԹԵՄԱՏԻՔԱԿԱՆ

առարկաների դասեր:

տռ. Межевая, 2. 12—20

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ և ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Վ. Ո. ԶՄՇԿԵԱՆԻ

Մնում է իր հին բնակարանում Архивный переулокъ, Յակոբեանի տուն № 22: Ընդունում է երկու սեռի երեխաներ 4 տարեկան հասակից և պատրաստում միջնակարգ դպրոցների փոքր դասարանների համար:

տռ (Ե. Հ. Կ.) 1—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարեփոխվող տրամադրութիւն. Վերջին տեղեկութիւններ. Մամուլ: Տեղեկութիւններ գաւառից. Տեղեկատու Զանգեզուրի. Բարձրագոյն դպրոցներում. Շարժումներ և հետևանքներ. Դրամատիքական ընկերութեան նիստը. Եակ. Աբրամօվ. Ղազախի ցաւերից. Հայոց ազգագրական ընկերութեան ճիւղերը գաւառներում. Ճանաչիր դերդ. Իմ պատասխանը. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԲԱՐԵՓՈԽՎՈՂ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

I

Գաւառից եկած մարդիկ մեզ հաղորդում են, որ Թուրքերի մէջ նրանք նկատում են աւելի խաղաղ տրամադրութիւն քան առաջ: Նրանք զղջում են իրանց արածների վրա և շատ ցաւում են, որ գործիք են դարձած եղել չարամիտ անձերի ձեռքում, որոնք և դրդել են նրանց կատարելու մի շարք դաւադրական գործեր իրանց հայ հարևանների դէմ:

Թուրքերը զգացել են, որ վերջ ի վերջոյ իրանք միայն վնասվել են և վնասվում են հայ-թուրքական ընդհարումներից նոյնիսկ այն դէպքերում, երբ իրանք եղել են յաղթողների դերում: Իսկ պակաս չեն և այնպիսի դէպքեր, երբ Թուրքերը հանդիպել են գոռ դիմադրութեան և կորցրել են թէ իրանց զաւակներին և թէ իրանց գոյքի մի մասը:

Իսկ ընդհանրութեան տեսակէտով օգուտ չը կայ ոչ մի կողմի համար. ինչ վերաբերում է վնասներին, նրանք անթիւ և անհամար են:

II

Մենք հաւատում ենք, որ Թուրք գիւղական ազգաբնակութիւնը ամենևին չէ համակրում հայ-թուրքական ընդհարումներին և նոյնպէս կարօտ է խաղաղ աշխատաւոր կեանքին, ինչպէս և նրա հայ հարևանը:

Բայց նրա վրա ազդեցութիւն ունեն աւազակաբարոյ անձեր, որոնք միշտ մի նկատելի տոկոս են կազմում Թուրք ազգաբնակութեան մէջ: Ինքը Թուրք մասսան նոյնպէս կեղեքվել և հարստահարվել է այդ աւազակներից, բայց անզօր է եղել կազմակերպելու հանրային կռիւ նրանց դէմ և ընդհակառակը ընկճվել է ու նոյնիսկ գործիք դարձել նրանց ձեռքին:

Աւազակը և՛ Թուրք մասսայի թշնամին է և՛ յաճախ Թուրք մասսան աւելի է կորուստներ ունեցել իր աւազակ տարրերից, քան ուրիշները:

III

Երբ վերջին երկու տարիներում, հայ-Թուրքական յարաբերութիւնները թշնամական բնաւորութիւն ստացան, աւազակը սկսեց իրան հրատարակել իբրև գաղափարական մարտնչող մի անձն: Նա հանդէս եկաւ, իբրև Թուրք տարրի պաշտպան, իբրև մահմեդականութեան քաջամարտիկ: Թուրք բէգը, Թուրք փոքր ինտելիգենտը հրաւիրում էին ժողովրդին կռիւ յայտարարելու հայերի դէմ:

Եւ Թուրքը հետևեց նրանց: Մանաւանդ աւազակը, բէգը, ինտելիգենտը բոլորը միացած հրաւիրում էին նրան մարտի և մաքառման: Մասսան հաւատաց և գնաց, ուր նրան դրդում էին նրա ուժեղները և ղեկավարները:

IV

Բայց այդ խեղճ մասսան դառն փորձերից յետոյ տեսաւ, որ նա խաբվել է և անվերադարձելի կորուստներ ունի: Նա տեսաւ, որ հայը մնաց դարձեալ հայ, որ ոչ մի նոր արքայութիւն չը բացվեց Թուրքի համար, իսկ ընդհակառակը ապագայի նրա գործերը այնքան վատթարացան, որ նա չը գիտէ, թէ արդեօք կարող է նա առաջվայ իր դիրքը պահպանել երկրի այս ու այն անկիւնում:

Ահա Թուրք մասսայի այդ հիասթափութիւնը և արթնացած գիտակցութիւնը—նշանաւոր երևոյթ է, որից պէտք է օգտվել հաշտութեան և խաղաղութեան գաղափարը առաջ տանելու և հաստատելու համար:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեզ հեռագրում են Նոր-Նախիջևանից, հոկտեմբերի 2-ին.

«Հոկտեմբերի 1-ին սրտի պայթումից վախճանվեց Նահապետ եպիսկոպոս Նահապետեանը: Թաղումը տեղի կունենայ թեմակալ առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսի գալուց յետոյ»:

Մուշէ վարդապետ

Էջմիածին, 1 հոկտեմբերի

Բեսարաբիայի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոս Խուդավերդեան ճանապարհ է ընկել դէպի Նոր-Նախիջևան կատարելու Նահապետ եպիսկոպոսի թաղումը:

Ալէքսանդրօպօլից մենք ստացանք հետևեալ հեռագիրը սեպտեմբերի 30-ին.

«Երէկ գիշեր վախճանվեց Ալէքսանդրօպօլի վիճակի հայ-կաթօլիկ եկեղեցիների բարեկարգիչ Տէր Պօղոս Նահապետեան վարդապետը»:

Եզեկեան

Աստրախան, 1 հոկտեմբերի

Այստեղի կօնսիստօրիան ստացել է հեռագիր, որ աչքի առաջ ունենալով Աբիստակէս եպիսկոպոսի հրաժարականը, Աստրախանի թեմի համայն ժողովուրդը ձեռնարկի նոր առաջնորդի ընտրութեան: Պէտք է ներկայացվեն երկու թեկնածու, որոնցից մէկը կը հաստատվի առաջնորդ:

Ագուլիսից սեպտեմ. 25-ին հաղորդում են.

Այսօր առաւօտեան մզկիթի բակում ջանբեզարների պարագլուխ Աբասկուլին ատրճանակի երեք գնդակներով վիրաւորեց տեղացի Մաշադի Ալուն այն պատճառով, թէ ինչու վերջինս, խախտելով բօյկօտը, շարունակում է առևտուր անել հայերի հետ: Արձակած չորրորդ գնդակը պատահաբար կպել է մի ուրիշ, Քեալբալայ Ալի անունով Թուրքի, և տեղնուտեղը անշնչացրել:

Դէպքի մասին տեղեկութիւն ստանալով, Ագուլիսի խաղաղարար ժամանժողովի անդամ Աւետիս Ներսիսեանցը իսկոյն բժիշկ վերցնելով, ստրաժնիկների հետ միասին, գնում է վիրաւորին բժշկական օգնութիւն հասցնելու:

Մաշադի Ալին վիրաւորված է երեք գնդակներով, որոնցից երկուսը փորին է կպել, իսկ երրորդը՝ ոտին:

Բժիշկը գտել է, որ վէրքերը վտանգաւոր են: Եկել է և Օրդուբաթի բժիշկը:

Վիրաւորը յայտնի էր իր խաղաղասէր բնաւորութեամբ և ամեն կերպ աշխատում էր ապարդիւն դարձնել Թուրքերի մէջ խլրտումներ առաջացնող չարամիտ տարրերի վառ, թշնամական արարքները, այդ պատճառով էլ նրա վրա խէթ աչքով էին նայում «ջանբեզարները»:

Զարագործը դէպքից անմիջապէս յետոյ փախել է և այժմ 3-րդ օրն է չը կայ:

Դերբենդ, 27 սեպտեմբերի

Ամսիս 25-ին Բերեքէյ կայարանի մօտ աւազակները գերեցին մի հայ երիտասարդի, Մատաթ անունով: Երիտասարդը ծառայում է ինժեներ Յարութիւնեանի մօտ: Փրկանք պահանջում են 3000 ր.: Արդեօք պ. Յարութիւնեանը կը հոգայ այդ մասին, կը տայ աւազակների պահանջած գումարը:

Մենք կարծում ենք այդ նրա սուրբ պարտականութիւնն է. հաւատացնում եմ, եթէ չուղարկվի աւազակների պահանջած գումարը, այն ժամանակ մենք կը կորցնենք մի ազնիւ պատանու:

Բօզալանդ գիւղ, Գեօկչայի գաւառ, 20 սեպտեմբերի

Մեր գաւառում վերջերումս սկսել են գողանալ դաշտերից բացի կենդանիներից, նաև հողագործութեան անհրաժեշտ գործիքներ, այն է՝ արօր (կեռ), խոփ, լուծ և այլն...: Մօտիկ Արէշ գաւառի Ամիրվան հայ գիւղի հանդերից յաջորդաբար այդ գործողութիւնը կատարվելիս անյայտ մարդու ձեռքով սպանվում է գիշերը մի Թուրք չարագործ, որը, ինչպէս յետոյ պարզվում է, լինում է Կուրդ-էլդար-բէգլուեցի մի յայտնի գող: Սեպտեմբերի սկզբներում լուր է պտտում, թէ միևնոյն գիւղում (Գեօկչայի գաւառ) խմբված են մի քանի Թուրքեր և սպասում են յարմար ժամանակի իրանց վրէժը հայերից առնելու համար:

Այդ լուրին շատերը չէին հաւատում, բայց ճշդվեց:

Սեպտեմբերի 14-ին, լուսնեակ գիշերով, 12 զինված ձիաւոր Թուրքեր յարձակվեցին ամիրվանցիների գոմշապաններին վրա և սկսեցին գնդակ թափել նրանց վրա, որոնցից մէկը՝ Պօղոս Խաչանեանը տեղն ու տեղը սպանվեց, Ստեփան Բախիշեանին կենդանի բռնեցին և ստիպեցին նրան քշել 24 գլուխ գոմէշները դէպի Գեօկչայ: Տանելով հային 4—6 վերստ, նրան մեծ տանջանքով աւազակները սպանեցին: Գոմշապաններից 4 ամիրվանցիները կարողացան փախչել, որոնք ճանաչել են աւազակների մէջ Կուրդ-էլդարբէգլուեցի և իմամլուեցի բնակիչներից: Քշելով 24 գլուխ գոմէշները ներքև, աւազակներից 7 մարդ, որոնք տեղիս գիւղօրայքից էին՝ գլխաւորապէս Կուրդ-էլդար-բէգլուեցի, բաժանվում են և գնում իրանց տները, իսկ մնացած 5 անծանօթ Թուրքերը շարունակում են ճանապարհը: Այդ գործի հեղինակներն էին Կուրդ-էլդար-բէգլուեցիք, իսկ աւազակախմբային խմբապետն էր գաւառիս յայտնի աւազակ Իսմայիլը, որ դէպքից 1 օր առաջ եղել է Կուրդ-էլ-դար-աէգլու գիւղում:

Աւազակները հասնելով Բօզալանդ գիւղի այգիներին՝ կանգնում են: Վստահ իրանց աջողութեան վրա, դրանք նոր եղեռնագործութիւն են կատարում: Աւազակների գլխաւոր Իսմայիլը մի ուրիշի հետ մտնում է Աղաջան Ադամեանի ջրաղացը, որտեղ քնած են լինում 3 բօզալանդցիներ՝ Նազարէթ Ադամեանցը, Սարգիս Ադամեանցը և նրանց ծառայ Գադին: Լամպի լուսի տակ աւազակները վերցնում են Սարգսի պատից կախած հրացանը, փորձում են վերցնել նաև Նազարէթի ծոցի ղօշալուլայ հրացանը. այդ վայրկեանին զարթնում է Սարգիսը և իսկոյն բռնում Իսմայիլի կոկորդից. զարթնում է նաև Նազարէթը և փորձում է կրակել ձեռի ղօշալուլայով, բայց իզուր—չէ տրաքում: Ծառայ Գադին երկիւղից փայտ է կտրվում և թաք կենում, այնպէս որ մինչև անգամ չէ կարողանում Սարգսի հեռու ընկած դաշոյնը մօտեցնել նրան: Նազարէթը ջրաղացի դուռն էր պահում, որ դրսի չորս աւազակները չը մտնեն ջրաղացը: Դրսից ջրաղացի ծակ ու ծուկով աւազակները կարկուտի պէս գնդակ էին թափում: Երկար մենամարտութիւնից յետոյ Սարգսին աջողվում է վերցնել դաշոյնը և Իսմայիլին սպանել: Իսկ դրսից եկած գնդակներից մէկը դիպչում է Նազարէթի կուրծքին, որին իսկոյն աւանդում է հոգին: Դրսի աւազակները նկատելով իրանց առաջնորդ Իսմայիլի ընկնելը, բարւոք են համարում փախչել, տանելով հայի հրացանը: Բայց որովհետև 4 աւազակներն էլ բոլորովին անծանօթ էին տեղին և ճանապարհներին, նրանք մինչև անգամ ամիրվանցիներից խլած 24 գլուխ գոմէշները թողին Բօզալանդի այգիների մօտ: Մինչ այդ՝ գիւղից գալիս են օգնութեան և գտնում 2 սպանված՝ Նազարէթը և Իսմայիլը. վերջինի վրա կար 4 փամփուշտաման 180 փամփուշտով, նրա մօտ ընկած էր նաև 1 բերդան հրացան: Ահա այդպէս է գաւառիս հայերի դրութիւնը: Ամիրվանցիները առան իրանց գոմէշները:

Ամսիս 16-ին Ղալագեաի դաշտում «Քաչալ-Թափա» կոչված տեղում գտնված է մի կատարեալ մերկ սպանված մարմին, որն ինչպէս ճանաչվեց Ագաչինացի Արշակ Ցակովլեանն է:

Պարոյր

Սղնախ, 30 սեպտեմբերի

Հինգշաբթի գիշերը, սեպտեմբերի 28-ին, Ցարսկիէ-Կօլօդցիի զինւորական հիւանդանոցում վախճանվել է Սղնախի վիրաւորված գաւառապետ Բախմոնդ Բախմոնդովիչ Արնօլդը: Վիրաւորվելուց յետոյ, հանգուցեալն ապրեց միայն երկու շաբաթ: Այն խանութները, որոնց մօտ պատահեց գաւառապետ Արնօլդին վիրաւորելու դէպքը, կողպված են, իսկ նրանց տէրերը, թէով ինը հոգի, բանտարկված են:

Ազաբէկ Սեհեբրակեանի կազմած ժողովրդական ներկայացումները աջողութեամբ աւարտվեցին: Առաջին ներկայացման յաճախեց 575 մարդ, երկրորդ՝ 493, երրորդ 487, չորրորդ՝ 216, հինգերորդ 467, ընդամենը՝ հինգ ներկայացումներին յաճախեցին 2238 մարդ:

N. N.

ՄԱՄՈՒԼ

Հոկտեմբերի 1-ից երկու նոր հայ թերթեր լոյս տեսան, առաջինը «Ձայն» անունով քաղաքական, հասարակական և տնտեսական շաբաթաթերթը, որի հրատարակիչն է՝ Մ. Դօլուխանեանը և խմբագիրը՝ Տ. Իսախանեան: Ինչպէս երևում է, նոր թերթը զբաղվելու է նախամեծարապէս հասարակական, սօցիալական ու քաղաքատնտեսական հարցերով: Ուշադրութեան արժանի է Եռալիմի «Տաճկահայ դատը և Դաշնակցութիւնը» վերնագրով յօդուածը, որ շօշափելով հայկական հարցը դասակարգային տեսակէտից, ցոյց տալով այդ հարցի և Դաշնակցութեան մէջ եղած յարաբերութիւնները, գալիս է այն եզրակացութեան, թէ Դաշնակցութիւնը կամ պիտի շարունակէ գործել առաջվայ ծրագրով, այն է բացառապէս Թիւրքիայի հայերի դատով, և, հետևաբար, պէտք է զրկվի իր բանւորութիւնից, կամ պէտք է լուծվի:

«Շեշտում ենք—ասում է թերթը, որ Դաշնակցութեան ներկայ կրիզիսը, նրա ներքին հակասութիւնների հետևանք է, և իզուր են շատ իզուր, այն դաշնակցական իդէօլօգների ճիգերը, որոնք ուզում են հաշտեցնել այս երկու կողմերն: Թուցէ նրանց յաջողվի ժամանակաւորապէս յետաձգել Դաշնակցութեան քայքայումը, բայց իրերի բնական զարգացումը, բանւորական դասակարգային կռուի ուղիղ ըմբռնումը մի կողմից, միւս կողմից՝ տաճկահայ խնդրի լուծման միջոցների մէջ կատարվելիք փոփոխութիւնները, ճակատագրական կերպով պիտի հասցնեն Դաշնակցութիւնը այդ վախճանին—բաժանման: Իսկ այս բանից կօգտվի թէ տաճկահայ խնդիրը և թէ կովկասահայ բանւորական շարժումը»:

Երկրորդն է «Երկիր» անունով հասարակական, տնտեսական, քաղաքական և գրական օրաթերթը, որի խմբագիր-հրատարակիչն է բժ. Մ. Մուրադեան: Նոր լրագրի առաջին համարը, կէս թերթից բաղկացած, իր բոլոր յօդուածներով՝ առաջնորդաց և ուրիշ, ներկայացնում է ամբողջովին փողոցային հայհոյանքների, անմիտ, անբովանդակ ֆրազների, յոխորտական սպառնալիքների մի կոյտ: Նրա ղեկավարները—գրական ազրուկների հին, ծանօթ դէմքեր—այնքան կուրացած են անձնական կրքերից, որ չեն մտածել մի բոպէ, թէ ամեն մի լրագիր, որ նոր է լոյս տեսնում, պէտք է գոնէ մի հատիկ թարմ միտք տայ իր ընթերցողներին: Ըստ հին սովորութեան, նրանք խօսում են շարունակ ժողովրդի և աշխատաւոր մասսայի, գիւղացիութեան անունից, որպէս թէ իրանք են պաշտպան ժողովրդի, մոռանալով, որ հէնց այդ ժողովուրդը, ենթարկվելով իրանց կողմից բռնութիւնների, զզուելի կամայականութիւնների, հարստահարութիւնների, մի ըմբռան ցայտած՝ բողոքում է այդ ինքնակոչ պաշտպանների դէմ, օգնութիւն և փրկութիւն է հայցում: Ամեն բոպէ, ամեն քայլափոխում դաւաճանութիւն ժողովրդական իրաւունքների, շահերի դէմ, ոտնակոխութիւն մարդկային տարրական իրաւունքների, անձի անձեռնմխելիութեան, մամուլի ազատութեան, խղճմտանքի և կամքի ազատութեան գաղափարների, և միևնոյն ժամանակ գոռում գոչոց, թէ մենք ենք ժողովրդի պաշտպանները և նրա բարեկամները: Ջուր են այդ կեղծիքները. ժողովուրդը այժմ շատ լաւ հասկացել է, ով է իր իսկական բարեկամն ու թշնամին, ով է նրա անկեղծ, սրտացաւ պաշտպանը և ով է նրա կեղեքիչը, հարստահարողը և նրա իրաւունքների դաւաճանը: Եւ հէնց այդտեղից է բղխում սխրագործ ասպետների զանազան «Դուրվանների», «Դիտողների» բարձրացրած վայնասունը իրանց շահատակութիւնները մերկացնող հակառակորդների դէմ, որոնց անուանարկելու համար «Երկրի» նոր դօն-քիշօտները գործ են ածում վաղուց քարկոծված և «իսկական հայ մարդկանց» «նոր-դաբրականների», «մեղուականների» զէնքը—քսութիւն և պրօվօկացիա. «տեսնում էք, ով իսկական հայեր, մեզ մատնում են, մենք մատնութեան զոհեր ենք»:

Աւա՜ղ, այդ քսութիւնները, զզուելի զրպարտութիւնները անկարող են այլ ևս իրանց ողորմ դերը կատարելու: Այդպիսի զէնքերը վաղուց կորցրել են իրանց ազդեցութիւնը հասարակութեան վրա: Հայ հասարակութիւնը և ժողովուրդը շատ լաւ ճանաչում է և Քալանթարին, Հ. Առաքելեանին, Լ. Սարգսեանին, և ձեզ, տխրահռչակ ասպետներիդ, որ շահագործում էք այդ ժողովուրդը, և նրա գրպանը, և միտքը, և զգացմունքը, և խիղճը...

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Մեղրի-Գիւնէյ մհալ, 20 սեպտեմբերի: Մեր նախորդ նամակով հաղորդել էինք, որ Օրդուբաթի կողմի Թուրք հրոսակախմբերը Ալանգեազ սարով անցել են մեր մհալը և Բուղաքար և Թեյ Թուրք գիւղացիների օգնութեամբ քշել են մեղրեցիների և փիչկադեցիների 450 գլուխ տաւարները դէպի Օրդուբաթ: Մեղրեցիների տաւարները գտնվում էին Փիչկադ մի քանի տնից բաղկացած հայ գիւղակի մօտ՝ Լիչկվազ ամարանոցում, Մեղրից 12 վերստ հեռաւորութեան վրա, և տաւարները երկրի ներկայ խառնակ մոմենտներում թողել էին մի Թուրք հովիւի տրամադրութեան տակ: Եթէ մեղրեցիների դիւրահաւատ, սառն, անտարբեր, մեծամիտ և ինքնավստահ վերաբերմունքը չը լինէր, ի հարկէ, մենք մեր տաւարները Թուրք հովիւի տրամադրութեան տակ չէինք դնիլ և մեր սեփական ձեռքով Թուրքերին չէինք տայ: Երբ մենք պահանջում էինք հասարակութիւնից հեռացնել տաւարները Լիչկվազ ամարանոցից, դուրս եկան հասարակութեան միջից մի քանի անհատներ և բացարձակ կերպով պաշտպանում էին այն աղայական սկզբունքը, որ Թուրքերը երբեք չեն յարձակվի մեղրեցիների տաւարների վրա, երևակայելով իրանց անմատչելիութիւնը: Այդ տաւարներից 150 գլուխ պատկանում էր մեղրեցիներին, 270 գլուխ փիչկադեցիներին և 30 գլուխ Թուրք հարևան լեհվազեցիներին: Քշելու լուրը հասնելուն պէս տղերքը գնացին առաջն առնելու, բայց ուշ էր: Ալանգեազ սարումը մեր տաւարները յետ խլելու կռւին մեր տղերանց հետ կռւում էին և Թուրք լեհվազցիներից մի քանիսը:

Ամսիս 18 ին նոր գեներալ-նահանգապետ Բաւէրի կարգադրութեամբ վերադարձաւ Մեղրի մեր մասի պրիստաւ Շահգալդիեվը և պահանջեց Մեղրիի հասարակութիւնից 800 ր. տուգանք, զէնքեր և այն յանցաւորին, որ բարոյական իրաւունք է համարել, խեղճ և անպաշտպան քաջարանցիներին օգնութեան գնալու: Հասարակութիւնը կատարեց պ. պրիստաւի պահանջը. վճարեց 800 ր. զէնքերը և յանցաւորին, որ երեք ամիս բանտարկութեան է ենթարկվում: Զէնքեր և տուգանքներ է առել Գիւնէյ-Մհալի հետևեալ հայ գիւղերից, Կալերից—500 ր., Վանքից—700 ր., Լիչկից—800 ր. և Տաշտունից 700 ր.: Վերին-Ղափանի հայ գիւղերից. Բուրդիքանդից—600 ր. Հանդից—500 ր. Մազրայից—300 ր. և Փուրխադից 400 րուբլի: Բոլոր գիւղացիները վճարել են տուգանքները, յանձնել են բոլոր զէնքերը և յանցաւորներին: Մոռացայ ասել, որ նահանգապետի կարգադրութեամբ հիմնայատակ են արվել բոլոր այն յանցաւորների տները, որոնք իբր թէ մասնակցութիւն են ունեցել: Եթէ այդ պահանջները չը կատարէին, այդ գիւղերը պէտք է ենթարկվէին ռմբակոծման և էկզեկուցիայի: Ներքին-Ղափանով գաւառապետը զօրքով դէպի մեր կողմը անցնելուց ռմբակոծել է տասն Բեխ, Վաչագան, Բաղաբուրջ, Կուտկում, Կավարտ և Քարաբաթումը գիւղերը և իւրաքանչիւր մի ծխից առել է 15-ական ր. տուգանքներ Ղաթար-Բեարխանա և այլ մանր մունր Թուրք գիւղերը աւերելու համար: Նոր նահանգապետ Բաւէրը իր գալուց այդ տուգանքները դարձրել է 25-ական ր., մինչդեռ, ինչպէս ասում են, Թուրքերի վրա սահմանած 10-ական ր. տուգանքները գաւառապետի ձեռքով գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ մնացել են նոյնը:

Գ. գաւառապետը այստեղից զօրքով անցնելուց մենք տեղեկացանք, որ Վերին-Ղափանը անցնելուց Կաւթառ Թուրք գիւղը ենթարկվել է ռմբակոծման և խիստ էկզեկուցիայի:

Մեր գաւառապետը Վերին-Ղափանի հայ և Թուրք աւերված գիւղերով անցնելուց մտադրութիւն է ունեցել, ինչպէս ասում են, խիստ էկզեկուցիայի ենթարկել Հանդ, Բուրդիքանդ, Մազրա, և Փուրխուդ գիւղացիներին, բայց շնորհիւ պ. Սմբատ Մելիք-Ստեփանեանցի միջնորդութեան, միայն տուգանքներ են առնում: Ասում են, որ ոչ ոք իրաւունք չունի նախայարձակ լինելու և մթթէ Ղափանի հաերը նախայարձակ են եղել, ոչ. այլ օգնութեան են գնացել: Նախայարձակ լինողը եղել են թուրքերը և ասում են իբր թէ հաւասարչէս տուգանքների են ենթարկվել Շաղաղին, Փիրզադան, Աւելիք և Օխչի թուրք գիւղացիները, Բաշքարանց հայ գիւղի վրա նախայարձակ լինելու համար: Հարցնում ենք. որտեղից պէտք է տան թուրք աւերված և կիսաքաղցած գիւղացիները այդ տուգանքները, երբ ներկայումս թափառում են Նախիջևանի գիւղում և պարապվում են աւազակութիւններով:

Մեր պրիստաւ Շահգալդիևը առաւ Վանքավար հայ գիւղացիներից 1800 ր. տուգանք՝ օրդուբաթցիների իբր թէ ոչխարները քշելու համար, մինչդեռ վանքավարցիների և դաշտանցիների մօտ 1000 հատ ոչխարները օրդուբաթցիները քշեցին այս կողմից անցեալ տարի, երբ այստեղ էին պրինց Նապօլէօնը, մեր և Նախիջևանի գաւառապետները և մի կօպէկ չը ստացան թուրքերից: Մեր մասում անհանգիստ և մեր տաւարները տանելու գործում մասնակցողներն են Թեյ և Բուղաքար գիւղացիները, որոնք գաղթել են Օրդուբաթ: Տաւարները տանելու համար պրիստաւը քննեց և նոյն իսկ Թեյ և Լէնգաղ թուրք գիւղացիներից մի քանիսը հաստատեցին բողոքութիւնը:

Թէ մեր կողմի և թէ Գողթանի կողմի բոլոր թուրքերին գրգռող, թշնամական գաղափարներ ներշնչողը բուն Օրդուբաթն է, համիսլամականութեան բուն կեդրոնը, որտեղից ֆանատիկոսական և հակակուլտուրական կոչեր ցրւում են կովկասեան բոլոր թուրքական գիւղերը և լարում են խեղճ, ողորմելի ագրատ թուրքերի տրամադրութիւնը դէպի հայերը: Հարկաւոր է, որ կառավարութիւնը լուրջ ուշադրութիւն դարձնէր յատկապէս օրդուբադցիների վրա: Վերջին ժամանակներս օրդուբաթցիները անցնում են Բուղաքարով և քշում են նոյն իսկ թուրք գիւղերի տաւարները: Այդ անում են այն նպատակով, որ թուրքերը գաղթեն և յարձակվեն Գիւնէյ-Մհալի հայի գիւղերի վրա: Դրութիւնը դեռ կրիտիկական է մնում: Գիւղից գիւղ մեծ զգուշութեամբ է կատարվում երթևեկութիւնը: Հանգստութիւնը այն ժամանակ կը լինի երբ սարերի անցքերը կը փակվեն ձիւնով: Օրդուբաթցիները շարունակում են դեռ բոյկոտը: Անհրաժեշտ բերքեղէնների և նիւթերի պակասութիւն է: Գիւղացիների նիւթական, տնտեսական դրութիւնը չափազանց աննախանձելի է: Փոստը ուշ-ուշ ենք ստանում:

Հաստատ տեղեկութիւն ունենք, որ Օրդուբաթում թուրքերի մէջ երկպառակութիւններ և կռիւներ են ծագել: Ասում են, որ Նախիջևանի կողմից եկած թուրքերին զինել են մօսիններով և ուղարկել Քուրդիքանդ և Հանդ գիւղերի վրա: Թուրքերը երբ կոտորվում են միացածներն էլ վերցնում են հրացանները և իւրաքանչիւրը հրացանը ձեռին վերադառնում է իր տունը, փոխանակ տանելու և Օրդուբաթում յանձնելու իրանց կոմիտէին:

Ամսիս 20-ից սկսվել է կանոնաւոր ուսումը տեղիս երկդասեան ուսումնարանում:

Այս րոպէիս վստահութեամբ մի թուրք Օրդուբաթից մօտս գործեց իր մշտական գործով պարապվելու և պատմեց, որ իբր թէ Նախիջևանի գաւառապետը իր հետը բերում է Վերին Ղափանի բոլոր թուրքերին իրանց գիւղում պատսպարելու և իբր թէ այստեղից հայ և թուրք ներկայացուցիչներ է տանելու Օրդուբաթ, հաշտութիւն կնքելու համար: Մենք սովոր չենք անհեթեթ խօսքի այդպիսի «հաշտութեան» անունը մասին:

Յ. Դ.

Սաբաթլու, Նուխու գաւառ, սեպտեմբերի 25-ին: Արդէն մի ամբողջ ամիս ու կէս է, որ մեր գիւղի երկու օրեկան մանուկից սկսած մինչև 14—15—16 տարեկան պատանիները վարակվել են ծաղիկ հիւանդութիւնով. օր չէ անցնում երկու-երեքը չամփոփվեն սև հողի տակ: Ամիս ու կէսի ընթացքում քսանից չափ երեխաներ թէ երկու աչքով կուրացել են և թէ զոհ են գնացել: Տարիներ են անցնում ֆելդշէր չէ գալի մեր գիւղը, որ երեխաների ծաղիկը կտրելով ազատէ մահից. ոչ էլ բժիշկներն են ուշ դարձնում մեզ վրա: Ծաղկի և բաղադ ուռուցքի ժամանակ բժշկի դեր են խաղում տեղական դալլաքները, որովհետև ստիպված գիւղացին պէտք է բժիշկ հրաւիրելու ժամանակ նախ 25 րուբլի «պրոգոն» վճարէ և 12 րուբլի էլ կառքի վարձ տայ և ապա մի կերպ հասցնէ նրան գիւղը. այդ էլ գիւղացին անկարող է լինում իր սուղ միջոցից լրացնելու: Ուստի ճարահատեալ դիմում է դալլաքներին: Վերջիններս էլ իրանց գիտցածն են անում, բողոքի նիւթը խոր ակօսներ են բաց անում ածելիով, կամ նշտարով ծակոտում, կամ մկրատով կատէի ծայրից կտրում: Երեխաներից շատերը այդ մարդ գազանների երկիւղի ազդեցութեան տակ մահանում, զոհ են գնում:

Ահա մի բազմամարդ գիւղ, որը բաղկացած է 156 տանից և ունի մօտաւորապէս 1821 հոգի բնակիչ, զուրկ է մինչև այսօր թէ բժշկական օգնութիւնից և թէ մի հմուտ ֆելդշէրի այցելութիւնից: Սակայն չը մոռանանք, որ մօտ օրերս գիւղս էր եկել վարդաշէնցի «բրուտ» Պատուականը, որը յայտնեց գիւղացիներին, որ եկել է ծաղիկ կտրելու, քանի որ գիւղացիք քաջ ծանօթ էին նրան, որ նա երեկվայ բրուտն էր, ով կը վստահանար նրան ծաղիկ կտրել տալ: Մեր գիւղացիք զարմացած վռնդեցին նրան գիւղից: Եթէ մի որ և է կառավարչութիւն ֆելդշէր յանձն առնի ծաղիկ կտրելու պարտականութիւնը, խոստանում ենք նրան իւրաքանչիւր երեխայի համար լաւ վարձատրել: Այս մասին բժիշկների ուշադրութիւնն ենք հրաւիրում:

Յով. Ք. Տ. Ա.

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

Գորիս, սեպտեմբերի 22-ին

Այսօր հինգերորդ օրն է, որ Բարահունջը տնքում է ծանր և անտանելի պայմանների տակ: Հարիւր յիսուն ծուխից բաղկացած գիւղը անխնայաբար քայքայվում, աւերվում, սովի է մատնվում էկզեկուցիայով:

Գիւղը խուզարկվում է անասելի կերպով. զինուորները եղաններ վերցրած մարագների խոտ-դարմանն են քրքրում, բահ ու քլունգ վերցրած՝ բակերի հողերն են փորփրում: Ամեն տեղ խուզարկում են: Գիւղի սահմաններն անգամ ման են գալիս: Երեկոյեան ժամի 8-ից յետոյ ոչ ոքի իրաւունք չէ տրվում տնից ոտք դուրս դնել. կարգը խանգարողին գնդակահարել են սպառնում:

Ուտելեղէն մթերքը սպառված է գիւղերում. տղամարդիկ անգամ անզօր են զօրքի պահանջներին դիմանալ և գիւղը թողնել են ուզում: Խոտ, գարի չը կայ գիւղում. հացը վերջացել է, թէյը չը կայ. կանայք փախել են շրջակայ գիւղերը:

Այսօր երբ թաղում էին յուսահատութիւնից վախճանված երիտասարդ Անդրէաս Ծատուրեանին, մի քանի սգւոր կանայք Գորիսից գնացին Բարահունջի եկեղեցին: Դիակի վրա սգալիս, յանկարծ զինուորները գալիս ցրւում են կանանց և մի քանի անգամ նրանց ետքից ատրճանակ արձակելով փախցնում: Խեղճերը հազիւ Գորիս դարձան:

Գեներալ Բաուէր հրամանագրել է շարունակել էկզեկուցիան մինչև բոլոր պահանջների բաւարարութիւն տալը:

Տաթևն էլ ենթարկվեց 3000 ր. տուգանքի. մինչև ամսի 24-ը պէտք է վճարվի, հակառակ դէպքում Բարահունջի օրին են հասցնելու գիւղը:

Նրանց էլ մեղաւոր են ճանաչում Տանձաւէրի աւերման և աւազակ Աւզրլալուի սպանութեան գործում: Սակայն, որքան Բարահունջն է մեղաւոր աւազակ Խանլարի անյայտանալուն մէջ, այնքան էլ տաթևացիք են մեղաւոր Տանձաւէրի աւերման և աւազակ Աւզրլալուի սպանութեան մէջ: Զարմանալին այն է, թէ կառավարութիւնը մեղքը մարդկանց վրա սաղացնելու գործում որքան հմուտ, որքան ճարպիկ պաշտօնեաներ ունի: Նաև, միթէ որևէ աւազակի անյայտանալը որոշ վնաս, կորուստ է բերում կառավարութեանը, որի համար այդօրինակ պատիժներ է բերում անմեղ մարդկանց գլխին:

Հայերը մի շարք մարդիկ են զոհ տուել թուրքերի քմահաճոյքին, որոնց մի մասն անգամ տեսնելու բախտը չենք ունեցել մենք. հապա ինչու կառավարութիւնը նրանց պատժելու համար միշտ անզօր, տկար էր ձեւանում: Միթէ պրիստաւ Բագրատ-բէգ Ասրլովը կառավարութեան մօտ մի Խանլարի, մի Աւզրլալու ծառայութիւն չէր մատուցել:

Եւ այսպէս, ցաւ ցաւի կցելով, մի ցաւոտ, տխուր կեանք ենք ստանում մենք: Եւ նորանոր ցաւեր զգալով ենք մեր կեանքի գոյութիւնը զգում:

Նաև, Ղափանի վեց գիւղերն էլ 15-ական ր. իւրաքանչիւր ծուխ տուժելով չը պրծան պատուհասից: Այժմ, ըստ Բաուէրի կարգադրութեան, 10-ական ր. ևս պէտք է պահանջել այդ գիւղերից և թուրքական գիւղերին վնաս հասցնողներին էլ պէտք է տան կառավարութեան ձեռքը: Զանգեզուրից սար-ձորով կտրված Ղափանն էլ թունաւորվեց:

Շուշուց անընդհատ զօրք է գալիս. Գորիս հասածները ցրվում են զանազան շրջաններում: Գորիսի պ. քաղաքագլուխը եռանդուն գործունէութիւն է ցոյց տալիս (իր իսկական պարտքը թողած) զօրքը երկյարկանի տներում տեղաւորելու մէջ: Քաղաքագլխի գոյութիւնը իմացվում է զօրքի համար բնակարան պատրաստելու ժամանակ, իսկ ուրիշ աւելի հարկաւոր ժամին ինչ կարիք կայ երևալու քաղաքում: Խօսք է բացվել, ինչպէս երևում է, ծխական դպրոցը զօրքի համար դատարկելու մասին, որովհետև խեղճ հոգաբարձուները անհանգիստ էին այդ առիթով:

Դրութեան ամեն մի փոփոխում կը յայտնենք յաջորդաբար:

Սազանդարեան

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Ներքին գործերի մինիստրութեան մէջ մշակված է մի կանոնադրութեան նախագիծ, վերահսկողութիւն ունենալու համար այն անձանց վրա, որոնք մուտք ունեն բարձրագոյն դպրոցներում: Այդ հսկողութիւնը պէտք է կառավարէ դպրոցի վարչութիւնը, որ և նշանակում է դրա համար յատուկ ծառայողներ: Եթէ այդ հսկողութիւնը անբաւարար լինի, այդ դէպքում մտադրութիւն կայ տեղական ադմինիստրացիային վերապահել իրաւունք հսկողութեան համար ոստիկանական ծառայողներ նշանակելու: («Р. В.»)

—Կիևից հեռագրում են «Р. В.» լրագրին. «Համալսարանում կախված է ռեկտորի յայտարարութիւնը, որով պատճառաբանվում է ուսանողական համաժողովների արգելումը. բանից երևում է որ արգելելու նախաձեռնութիւնը պրոֆեսորական խորհրդից է դուրս եկել, որոնք գտնում են, որ ընդհանուր ուսանողական ժողովները աւելորդ և անցանկալի են և թոյլատրում է միայն ի նկատի առնելով այն հանգամանքը, որ ուսանողները հնարաւորութիւն չունեն ուրիշ տեղերում ժողովներ գումարելու, ինչպէս որ այդ առհասարակ ընդունված է Արևմտեան Եւրոպայում:

—Սեպտեմբերի 25-ին տեղի է ունեցել Պետերբուրգի համալսարանի պրոֆեսորների խորհրդի նիստը: Պրոֆեսոր Պետրաժեցկու հրաժարականի շնորհիւ ստանձնելու իրաւաբանական ֆակուլտետի դեկանի պաշտօնը նրա փոխարէն ընտրվել է պրոֆ. Գրիմմ ձայների մեծամասնութեամբ ընդդէմ մէկի: Պրոֆեսոր Կարեևը ընտրվել է ընդհանուր պատմութեան պրոֆեսոր ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 7-ի: Որովհետև պարզվել է, որ համալսարանում դասախօսութիւններին ներկայ են լինում կողմնակի անձինք, որոնք կազմում են մասսա, այդ պատճառով խորհուրդը որոշել է յիշեցնել, որ կողմնակի անձինք, բացի դասախօսներից, չը պէտք է ներկայ լինեն: Միևնոյն երևոյթը նկատվել է և կանանց բարձրագոյն դասընթացներում և ոստիկանութիւնը այդ բանի վրա արդէն ուշադրութիւն է դարձրել: Ապա քննվել է այն հարցը, թէ ընդունել, արդեօք, անգլիական պատգամաւորութեան ընդունելութեան հանդիսին մասնակցելու համար պետերբուրգեան համալսարանի անունից պատգամաւորութիւն ուղարկելու առաջարկը, թէ ոչ: Ձայները բաժանվել են, և յետոյ տաք վիճաբանութիւններից յետոյ ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 16-ի վճռել են ընդունել առաջարկութիւնը: Պատգամաւոր է ընտրվել պրոֆեսոր Մ. Մ. Կովալևսկին: «Страна»

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

—Սվէաբորգի յուզումները և անկարգութիւնները լուսաբանելու համար նշանակված յանձնաժողովի հաւաքած նիւթերը յանձնաժողովի նախագահ գեն. Գոնչարովը ներկայացնելու է Բարձրագոյն բարեհայեցողութեանը: Յանձնաժողովը պարզել է, որ հրամանատարներից և օֆիցերներից շատերը չափազանց անփոյթ վերաբերմունք են ցոյց տուել թէ դէպի ծառայութիւնը և թէ դէպի զինուորները: Զօրանոցները անուշադրութեան մատնված լինելով՝ հեղեղված էին արգելված գրականութեամբ, և մի քանի զօրամասերում դէպքեր են եղել, երբ ագիտատորները և կողմնակի անձինք մինչև իսկ ապրել էլ են զօրանոցներում: Միևնոյն ժամանակ յանձնաժողովը պարզել է, որ, չը նայելով անցեալ տարի դեկտեմբերի 6 ին հրատարակած Բարձրագոյն հրամանին, զինուորների սնունդի և թէյի պաշարը աւելացնելու մասին, մի քանի զօրամասերում չեն աւելացրել: Այդ գլխաւոր պատճառներից բացի, եղել են խլրտումների երկրորդական շարժառիթներ ևս, որոնք ծագել են զինուորների և նրանց անմիջական հրամանատարների մէջ ստեղծված թիւրիմացութիւնների շնորհիւ:

—Սեպտեմբերի 20-ին ֆինլանդական երկաթուղու Պերկիարվի կայարանում անյայտ չարագործների ձեռքով սպանվել է ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան ծառայող Զայցեվ, լրտեսութեան պատճառով:

—Սեպտեմբերի 22-ից լոյս 23 գիշերը ֆինլանդական ծովախորշում Նարվայի մօտերում սահմանապահների առանձին զօրամասի պահակաւորը բռնել են մի փոքրիկ առագաստամակոյկ: Խուզարկութեան ժամանակ մակոյկի մէջ գտնվել են 20 արկղներ, որոնց բաց անելով՝ գտել են հրացաններ: Մակոյկի մէջ եղող մարդկանց կալանաւորել են, իսկ հրացանները՝ գրաւել: «(Бирж. Вѣд.)»

—Սեպտեմբերի 25-ին Պետերբուրգում հեռագիր է ստացվել Բրեստեան գնդի հրամանատար գեն. Դումբաձէից, որով հաղորդում է, որ իր կեանքի դէմ կատարված մահափորձի օրը նա կանչվել էր դիվիզիայի շտաբը, որովհետև մտադրութիւն կար նրան Թէօդոսիայի գեներալ-նահանգապետ նշանակելու: Գեներալը ռումբով վիրաւորվել է աջ ոտից և թեթև ճնշված է ստացել գլխի վրա: Կալանաւորվածների մէջ կայ մէկը, որ այրուածքներ ունի ձեռքերի վրա, առանց գլխարկի է և առանց վերարկուի: Գեներալը հաւատացած է, որ դա է մահափորձ անողը, որովհետև նրա գլխարկը և վերարկուն գտնվել է այն ճանապարհի վրա, որտեղից նա, ինչպէս ենթադրում են, փախել էր: Վիրահատութեան ժամանակ ռումբի կտորտանքները հանվել են և գեներալը յոյս ունի մի երկու շաբաթից յետոյ բոլորովին առողջանալու («Р. В.»)

—«Нов. Путь» լրագրի Սիմֆերոպոլեան թղթակիցը հաղորդում է չափազանց սենսացիօն մի տեղեկութիւն Սեվաստոպոլից, որտեղից, տեղական ադմինիստրացիայի կարգադրութեան շնորհիւ, ուղղակի, անմիջական յարաբերութիւն Ռուսաստանի հետ ներկայումս գոյութիւն չունի: Բրեստեան գնդի հրամանատար Դումբաձէն, հաւաքելով քաղաքի ազգաբնակութեան ներկայացուցիչներին՝ կտրական կերպով յայտարարել է նրանց, որ եթէ չը յանձնվեն յեղափոխականները, նա գետնի հետ կը հաւասարեցնի քաղաքի Կորաբելնի արուարձանը, և թուրքական գաղութը ու նրանց տեղը հաճար կը ցանի: Թղթակցին աջողվել է իմանալ, որ արդէն կազմված է մարդկանց մի ցուցակ, որոնք յեղափոխականների տերրորիստական նոր գործողութիւնների դէպքում, մահվան պատժի պէտք է ենթարկվեն: Այդ ցուցակի մէջ մտել են տեղական ինտելիգենցիայի 17 ներկայացուցիչներ ի թիւս որոնց. բժիշկներ՝ Նիկոնով, Ֆլերով, Նաթանզոն, Բերլին և Զիդուսսկի և երդուեալ հաւատարմատարներ Պարատով և Բէզնիկով,

—Կուրսկից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են. «Ֆատեժի գաւառից տեղեկութիւն է ստացվել, որ այնտեղ իր սեպհական կալուածքում կողոպտվել է Ֆատեժեան ազնուականութեան պարագլուխ Մասլով: Չարագործները ոստիկանական նշանազգեստներով գնում են նրա կալուածքը խուզարկութեան պատրուակով, կապում են և այնտեղ եղողներին և, 40,000 րուբլի վերցնելով, անյայտանում են:

—Նարվայում մօտ օրերս քննվելու է պօստ-հեռագրական ծառայողների գործը, որոնք մեղադրվում էին գործադուլ անելու համար: Մեղադրվողները բոլորն էլ արդարացված են, և արդարացուցիչ դատավճիռը բուռն ծափահարութիւնների արժանացաւ հանդիսականների կողմից: («Бирж. Вѣд.»)

—«Бирж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ Վիլնայում կալանաւորվել են 3 գիւղացիներ, որոնք ագիտացիա էին անում Վիբորգի կոչի ցուցմունքի համաձայն պասսիւ դիմադրութիւն ցոյց տալու համար:

—Ի նկատի առնելով, որ տերրորիստական շարժումը Ռուսաստանում չէ դադարում, համապատասխան վարչութիւնը մտադիր է վերականգնել նահանգապետների և փոխ-նահանգապետների պաշտօնները, նշանակելով մի քանի նահանգներում նոր նահանգապետներ և փոխ-նահանգապետներ զինուորականներից: («Око»)

—Պատժողական զօրամասերի հրամանատարները և զինուորական գեներալ-նահանգապետները, սարսափեցուցիչ եռանդով աշխատում են կրամոլան արմատախիլ անել: Լեհական թագաւորութեան զինուորական գեներալ-նահանգապետներից մէկը մի անգամ մի յայտարարութիւն է հրատարակում, որտեղ խոստանում էր պատժել ծնողներին իրանց հայրերի մեղքերի համար: Կովկասը նուաճող գեն. Բաուէրը սպառնում էր ոչնչացնել այն բոլոր գիւղերը, որտեղ կը գտնվի մի զէնք անգամ: Բռնական փոխադարձ երաշխաւորութեան այդ սարսափելի սիստեմը, որ բարբարոսական հին-հին ժամանակներից է փոխադրվել XX դարը, դարձեալ հետևող է գտել յանձին պատժողական զօրամասի մի ինչ որ հրամանատարի, որ շահատակում է Կուրլեանդիայի նահանգում: Ընթերցողները, երևի, ուշադրութիւն են դարձրել, «Бирж. Вѣд.» լրագրից քաղված լուրի վրա որ յիշեալ, հրամանատարը, հաւաքելով համայնական ժողով, յայտարարել է, որ եթէ համայնքի սահմաններում չարագործները յարձակվելու լինեն ստրաժնիկների կամ պաշտօնական անձանց վրա, իւրաքանչիւր այդպիսի դէպքի համար վճռականութեամբ մի քանի գիւղացիներ պէտք է գնդակահար լինեն: Հարկ չը կայ ասելու, որ այդպիսի մի միջոց դէմ է արդարութեան ամենատարրական զգացմունքներին անգամ.

(«Р. В.»)

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

Կիրակի, հոկտ. 1-ին, Արտիստական ընկերութեան դահլիճում կայացաւ դրամատիկական ընկերութեան նիստը, մասնակցութեամբ 35 անդամների, նախագահութեամբ պ. Ալէք. Քալանթարի և քարտուղարութեամբ պ. Կարապետեանի:

Վարչութեան կողմից անդամ-քարտուղար Ղորղանեանը մի համառօտ հաշիւ տուեց առաջիկայ 1906—07 թատրոնական սեզոնի և կազմված խմբի մասին: Յայտնվեց, որ դերասանական խումբը բաղկացած է 18 հոգուց, այն է դերասանուհիներ՝ հին խմբից—տ. Մայսուրեան, տ. Վարդուհի, տ. Զարիֆեան, տ. Աւետեան, տ. Նուրիկեան և օր. Բէգիջանեան, իսկ իբրև նոր ույժ—օր. Էրեմեան, Մոսկվայից. դերասաններ—պ. պ. Աբէլեան, Արաքսեան, Աւետեան, Զարիֆեան, Յարութիւնեան, Աղայեան, Ադելխանեան, Թաշճեան. իբրև նոր ույժ—Մ. Մանուէլեան և յուշարար—Տիրացեան:

Հարց ծագեց, թէ ինչու մի քանի դերասաններ և դերասանուհիներ նախորդ խմբից չեն հրաւիրված: Տրված բացատրութիւններից երևաց, որ մի մասը հրաւիրվել է Նոր-Նախիջևան, իսկ մի քանիսը չեն հրաւիրված, օրինակ տ. Սիրանոյշ, տ. Մելիքեան և այլն, միջոցների սղութեան պատճառով: Ապա դեկուցվեց, որ ներկայացումներ լինելու են շաբաթը 3 անգամ—Արտիստ. ընկ. թատրոնում, կլուբում և Հայլաբարի թատրոնում: Գալով նիւթական միջոցներին, ընկերութիւնը, ունենալով իր տրամադրութեան ներքոյ պ. Մանթաշեանի 5000 ր., պ. Աֆրիկեանի 1000 ր. նպաստները և անցեալ տարվանից մնացած 1000 ր., ընդամենը՝ 7000 րուբլի, ենթադրում է, որ կարող է այս սեզոնում այնպէս տանել գործը, որ սեզոնի վերջում ունենայ միայն 3000 րուբլի դեֆիցիտ և ոչ աւելի:

Դրանից յետոյ ընդհանուր ժողովը քննեց հետևեալ հարցերը.

1. Դրամատիկական ընկերութեան անդամներին տալ իրաւունք օգտվել 50% զեղչով ներկայացումների տոմսակներից, այսինքն ընկերութեան անդամը իրաւունք է ստանում ամեն մի գնված տոմսակի կէս գինը վճարել, մինչև 6 րուբլի գումարը ամբողջ սեզոնի ընթացքում: Որոշվեց ընդունել այս առաջարկը և յանձնել վարչութեան գործադրելու:

2) Փոխել ընկերութեան կանոնադրութիւնը և դարձնել ընկերութիւնը ոչ թէ Թիֆլիսի, այլ ամբողջ Ռուսաստանի հայոց դրամատիկական ընկերութիւն և ներկայացումներ կազմակերպել նաև գաւառներում և Հիւսիսային Կովկասում, ունենալով ընկերութեան գաւառական ճիւղեր: Այս խնդրի մասին բացատրութիւն տուեց պ. Աբէլեանը և մանրամասն յայտնեց ապագայ կազմակերպութեան պայմանները: Ժողովը, սկզբունքով ընդունելով պ. Աբէլեանի առաջարկը, ընտրեց մի մասնաժողով, որ մշակէ կանոնադրութեան փոփոխութեան ծրագիրը այդ մտքով և ներկայացնէ ընդհանուր ժողովին:

3. Դրամատիկական ակումբ հաստատելու առաջարկը, որի հեղինակ բժ. Մուրադեան տուեց մանրամասն զեկուցումն: Այս խնդրի մասին եղան շատ վիճաբանութիւններ. մեծամասնութիւնը գտնում էր, որ խնդիրը հասունացած չէ, որ առանձին դրամատիկական ակումբ հիմնել դժուար թէ կարելի լինի, այլ գուցէ կարելի լինի հիմնել գեղարուեստական ակումբ, ուր գրողները, գեղարուեստագէտները և առհասարակ ինտելիգենցիան կարողանան համախմբվել, տեսակցել և իր երեկոները օգտակար և զուարճալի կերպով անցկացնել: Ժողովը որոշեց. առ այժմ բաց թողնելով ակումբ հիմնելու առաջարկը, յանձնել մի մասնաժողովի աւելի մանրամասն մի նախագիծ մշակելու և ներկայացնելու ընդհանուր ժողովին:

4) Կարդացվեց մրցանակաբաշխութեան մասնաժողովի զեկուցագիրը, որից երևաց, որ տիկին Մակարեանի երկու տարվայ մրցանակը (300 ր.) հետևեալ պիէսներին է յատկացված ա) 75 րուբլի Շիրվանզադէի «Պատուի համար» պիէսին. բ) 75 ր. Շանթի «Ճամբուն վրա» պիէսին և գ) 75 ր. Գր. Եղիկեանի «Հրդեհ» պիէսին, այն պայմանով միայն, որ վերջին պիէսի հեղինակն իր երկն ուղղէ յանձնաժողովի ցուցմունքների համաձայն:

Այնուհետև ժողովը, մասնակցութեամբ մօտ 25 անդամների (մի մասը հեռացել էր հեռանալ ժամի 3-ը լինելով), կատարեց վարչութեան մի անդամի և 3 փոխ-անդամների ընտրութիւն: Վերընտրվեցին. վարչութեան անդամ—պ. Ռուբէն Յովհաննիսեան և փոխ-անդամներ—պ. պ. բժ. Մուրադեան, Յ. Ղորղանեան և Գ. Կարա-Մուրզա:

Ժողովը փակվեց ժամը 3½-ին:

ԵՒԳ. ՎԱՍ. ԱԲՐԱՄՈՎ

Սեպտեմբերի 20-ին Ստաւրոպոլում հողին յանձնվեց յայտնի հրապարակախօս և հասարակական գործիչ Եւգ. Վաս. Աբրամովի մարմինը:

Հանգուցեալը դեռ 50 տարին էլ չէր լրացրել. այնպէս որ դեռ երկար տարիներ կարող էր բեղմնաւոր կերպով աշխատել, եթէ երկարատև ու ծանր հիւանդութիւնը վերջ չը դնէր նրա արդիւնաւէտ կեանքին:

Ե. Վ. Աբրամովը իր գրական-հրապարակախօսական գործունէութիւնը սկսել է շատ վաղ, համարեա պատանի հասակից, հռչակաւոր «Отеч. Зап.» ամսագրում: Չը նայած որ կանոնաւոր բարձրագոյն կրթութիւն չէ ստացել, բայց դեռ այն ժամանակ շատերին զարմացնելիս է եղել իր լուրջ ու բազմակողմանի պատրաստութեամբ, որը նա ձեռք է բերել տակաւին աշխատութեամբ, ինքնակրթութեամբ: Այնուհետև նա մօտ 30 տարի աշխատել է գրական ասպարէզում և իր աշխատութիւնները հրատարակել է թէ առանձին գրքերով և թէ տպագրել է զանազան թերթերում, բայց միշտ մնացել է հաւատարիմ այն առաջադիմական-արմատական տրադիցիաներին, որ նրան ներշնչել են «Отеч. Зап.» նշանաւոր հրապարակախօսները—Նեկրասովը, Սալտիկովը, որոնց կրտսեր ընկերը լինելու պատիւն է ունեցել հանգուցեալը...

Աբրամովի առանձին գրքերով և բրօշիւրներով հրատարակած ինձ յայտնի 23 աշխատութիւնները կարելի է բաժանել մի քանի կաթեգորիաների: Օրինակ՝ զեմստվոյի և ժողովրդական կրթութեան վերաբերեալ՝—«Что сдѣлало земство и что оно дѣлаетъ», «Наши воскресныя школы» (հասա հատորներ), «Харьковская частная женская воскресная школа и воскресныя школы вообще», «Женскіе врачебные курсы». Կենսագրութիւններ՝ Կարազինի, Սմայլսի, Կոլումբոսի, Պեստալոցցու, Ֆրանկլինի, Ֆարադէյի, Ստեֆենսոնի ու Ֆուլտոնի: Այս խմբի գրքոյկները Պավլենկովի հրատարակած «Жизнь замѣч. людей» կենսագրական գրադարանի սերիայից են: Բացի դրանից՝ ինքը հանգուցեալը հրատարակել է իր կազմած հետևեալ կենսագրական—քննադատական աշխատութիւնները—«Ибсенъ и Бьернсонъ», «Пѣвецъ тоски (Гюи-де-Мопасанъ), «Два великихъ француза: Луи Пастеръ и Жанъ Масэ», «Памяти Бѣлинскаго»: Իրաւաբանական—հանրամատչելի բովանդակութեամբ՝ «Духовныя завѣщанія», «Наслѣдство и раздѣлъ», «Пріобрѣтеніе и отчужденіе имуществъ», «Аренда и наемъ имуществъ», «Заемъ, закладъ и залогъ» և «Личный наемъ и служба», Հանրամատչելի գիտական բովանդակութեամբ՝ Новѣйшіе успѣхи знанія (հասա հատոր), «Микроскопическіе врачи и друзья человѣка» և «Вселенная»:

Բացի առանձին գրքերով հրատարակած բազմաթիւ ուսումնասիրութիւններից՝ հանգուցեալը երկար տարիներ աշխատակցել է նաև Գայդէբուրովի հռչակաւոր «Недѣля շաբաթաթերթում, «Русск. Вѣд.» «Русское Слово», «Приаз. Край» և ուրիշ թերթերում և «Русская Школа» մանկավարժական ամսագրում, որի մէջ նա վարում էր «Хроника народнаго образованія» բաժինը: «Русская Школа» ամսագրում, ի միջի այլոց, իր ժամանակին նա տպագրել է մի համակրական յօդուած և մեր նախկին Հրատ. Ընկ. մասին:—Ընդհանրապէս հանգուցեալը նախանձախնդիր ու սրտացաւ էր դէպի ժողովրդական կրթութեան գործը և միշտ եռանդուն ու խանդավառ կերպով պաշտպանում էր ժողովրդական դպրոցի և ուսուցչի դիրքն ու շահը, զանազան դպրոցական և ոչ դպրոցական վարչական բիւրօկրատների ոտնձգութիւններից թէ մամուլի միջոցով, թէ քաղաքային ձայնաւորի պաշտօնով և թէ «Ուսուցչական միութեան» միջոցով, որի գործունեայ անդամն էր նա:

Իր գործունէութիւնը սկսելով Պետերբուրգում ապա տեղափոխվելով Ստաւրոպոլ՝ հանգուցեալը սկսել է եռանդուն կերպով գործել և հասարակական ասպարէզում, գլխաւորապէս, քաղաքային ինքնավարութեան մէջ, ինչպէս ձայնաւոր և բազմաթիւ յանձնաժողովների նախագահ: Նա շարունակ օպպօզիցիայի գլուխ է կանգնած եղել, և նրա քննադատական համարձակ ճառերն ու բազմակողմանի ուսումնասիրութեան արդիւնք զեկուցումները սթափեցնում, ազդում ու տոն էին տալիս Ստաւրոպոլի քաղաքային հասարակական գործերին:

Ժամանակակից հարցերի, հասարակական հոսանքների, ազատագրական շարժումների և քաղաքական կուսակցութիւնների մասին հանգուցեալը անցեալ ձմեռ կարդաց մի շարք դասախօսութիւններ, որոնք ահագին բազմութիւն էին գրաւում դէպի հասարակական ժողովարանի դահլիճը:

Նա համակրութեամբ էր վերաբերվում դէպի մեզ պէս ճնշված, հալածված ու թշուառ ժողովուրդները: Անցեալ տարի, Բագուի փետրվարեան արիւնալի դէպքերից յետոյ, երբ Ստաւրոպոլի հայոց եկեղեցում հոգեհանգիստ էր կատարվում անմեղ զոհերի յիշատակին, Ե. Վ. Աբրամովը ուզում էր մի ճառով թէ մեզ մխիթարել և թէ մերկացումներ անել, անարգ սիւնին կապել դարձ պրովոկատորներին, բայց, ինչպէս իր ժամանակին գրել էի «Մշակին», Գոժէլի նախկին և ապա Ստաւրոպոլի այն ժամանակվայ բռնակալ ոստիկանապետը խանգարեց...

Համառօտ կերպով ուրուագծելով հանգուցեալ Աբրամովի գործունէութիւնը՝ պէտք է աւելացնեմ, որ այդ բեղմնաւոր և անխոնջ գործիչը վերջին ժամանակներս բաւականաչափ չէր գնահատվում, որովհետև անկախ մտքի տէր լինելով, չէր ուզում որոշ խաւերի կցվել ճակատին ու այս կամ այն կուսակցութեան ստրուկը կամ բռնակալը լինել... բայց և այնպէս թաղումը բաւական շուքով էր...

Հանգուցեալը, գրական աշխատանքով ապրելով ոչ թէ ոչինչ չէ թողել իր կնոջ և միակ երեխայի համար, այլ նոյն իսկ իր թաղման համար էլ միջոց չէր թողել: Այդ պատճառով քաղաքային վարչութիւնը նպաստ տուեց իր նշանաւոր գործչի թաղման համար: Թաղմանը ի միջի այլոց, ներկայ էին քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչները: Բազմաթիւ պսակների մէջ մանաւանդ աչքի էին ընկնում Ստաւրոպոլ քաղաքի և «Приаз. Край» թերթի ձօն պսակները:

Հանգիստ ոսկորներիդ, ազնիւ գործիչ...

Սալիմեան

Ստաւրոպոլ

ՂԱԶԱԽԻ ՑԱՒԵՐԻՑ

Որպէս ղազախեցի, չեմ կարող լռութեամբ անցնել այն բոլորի մասին, ինչ գալիս անցնում է իմ ծննդավայրի վրայով:

Կարծեմ լրագիրներից շատերը իմացած կը լինեն Ղազախում այժմեան սրտաձմլիկ դրութիւնը, որ իւրաքանչիւր հայի վրա պարտականութիւն է դնում՝ անուշադիր չը լինել դէպի այդ դժբաղդ գիւղականները:

Իբրև մօտիկ լինելով Ղազախին, ցանկանում եմ այս հեռաւոր տեղից մի քանի տեղեկութիւններ տալ «Մշակի» ընթերցողներին:

Սարսափելի է խեղճ ղազախեցիների դրութիւնը: Դեռ մի ցաւ ու դարդը չը մոռացած, դեռ լացով աչքերը չը ցամքած, գալիս են իրար ետևից և նորա-նոր թշուառութիւններ...

Ղազախեցին գիշեր ու ցերեկ աչքի առաջ ունէր այն սարսափելի պատկերները, որ տեղի ունեցան յունվարեան հայ-թուրքական անմիտ ընդհարումների ժամանակ, բայց այդ սառսուռ օրերի ընթացքում էլ նա մի փոքրիկ յոյս ունէր, որը նրան թև ու թիկունք էր տալիս. այդ նրա մալ ու մասին էր, որով և ղազախեցին մոռանում էր իր անցած դառ- [illegible] րոպէները...

Յուլիս ամիսն էր. արտերը նոր հասել, հասկերը կուլ-կուլի դրել, մրգատու ծառերը պտուղներով ծանրաբեռնված, գիւղացու սիրտը թրթռացնում էին...

Եւ երբ ղազախեցին մանգաղը առում էր հունձն սկսելու, յանկարծ սև թուխպը երկինքը պատեց, անողոք Եղիան զրահաւորված, իր ամբողջ բարկութիւնը թափեց և խեղճ ու կրակ ղազախեցու յոյս ու ապաւէն արտերը ու պտուղները գետնին ճմռեց...

Կարկուտին յաջորդեց եղջերաւոր անասունների ժանտախտը...

Օրէց-օր ցորենի գինը բարձրանում է, իսկ անասունների ցաւը սաստկանում...

II

Այժմ աշունք է, իսկ առաջներս ձմեռ է գալիս:

Շուտով աշնանացանքը պիտի սկսվի, սերմացու է հարկաւոր: Լծկանը թանկացել է, փող է հարկաւոր: Տաշտումը հաց չը կայ, երեխաները լաց են լինում, հաց է հարկաւոր...

Տեսնելով, որ ոչ մի տեղից օգնութիւն չէ գալիս, ղազախեցին թողնում է ամեն
տունն ու վրան, գնում է գիւղի տանու
մօտ, որ անցագիր ստանայ և գնայ հեռաւոր
վայրեր փող աշխատելու...

Մօտ օրերս մի «աշխարհեցի» այսպէս
պատմում էր ինձ. «Երբ գնացի մեր տանուտէ
րի մօտ անցագիր ստանալու, նա ասեց,
պլանկա չը կայ՝ անցագիրը գրեմ:

—Տիգրան-բէգ, ի սէր Աստուծոյ, ինձ մ
նապարհից մի գիր, ընկերներս գնում են
գիշեր, ինձ նրանցից մի գիր:

«Նա բարկացաւ վրէս:

«Այդ միջոցին պիսերը մօտեցաւ և ակ
ջումս փսփսաց՝ «Եթէ ոչինչ չունես, գոնէ
հաւ էլա բեր», ասաց:

«Ոչ ջիբումս փող կար, որ առնէի, ոչ
մեր տանն էր հաւ մնացել: Ճարահատեալ
նապարհապաշտներս միակ մորթած հաւը
և տալով տանուտէրին, անցագիրս ստացա

III

Բազմաթիւ, անգործ ղազախեցիներ
գուր խուլ անկիւններում վխտում են,
ված, ծարաւ գիշերելով...

Ցանկալի կը լինէր որ հայ կառավարիչ
ըը ընդունէին ղազախեցիներին: Բարի
դիկ, ոտի կանգնեցրէք ղազախեցիներին

Յովհաննէս Տ.-Ստեփանեան

Բագու, սեպտեմբերի 25-ին

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

Անցեալ կիրակի, Հայոց Ազգագրական
կերութեան ընդհանուր ժողովում բա
քանի հերթական հարցերից և պ. Եր.
յեանցի պեղումների հնաքգրքիր զեկուց
ժողովը, աչքի առաջ ունենալով Կարսի
Բայազէտի, Ալեքսանդրապոլի և Երևանի
կերութեան անդամների զեկուցումը այդ
ղաքներում ընկերութեան ճիւղեր բաց
լու խնդրի վերաբերմամբ, որոշեց, համաձ
ընկերութեան կանոնադրութեան, այդ
րում բացած նոր ճիւղերը ընդունել իր
մի մէջ և հաստատել: Ազգագրական ընկե
թիւնը այն լայն ծրագրով, որով ներկայ
սկսել է իր գործունէութիւնը, անշուշտ
կուլտուրական յայտնի դերն ունի կատա
լու մեր մէջ: Մեր հնութիւնները տարէցտ
կորչում թաղվում են անհետ գետնի
կամ տգէտ բնակիչների ձեռքով քանդվ
գոմերի պատերի զարդ են լինում գերեզ
քարի քանդակները, հայկական և առհասա
Կովկասի անցեալ փառքի բեկորները: Կով
սեան հնագիտական ընկերութիւնը հնար
ւորութիւն չունի հսկելու և իր սուղ մի
ներով նպաստելու. ճանապարհորդներին ըն
մանք պատճառող բեկորների պահվելուն
հնաքգրքիր դոկումենտներ, գրքեր, քար
զարդեր գտած իբրև անհետ կորչում են
ժողովրդի մէջ, կամ օտարները դուրս են
նում, որ ազգային ուսումնասիրութեան
նիւթերն: Շատ գտած իրեր, ինչպէս ոսկե
կամ արծաթէ հալում և նոր զարդեր են
նում, իսկ շատ ձեռագրներ կորչում են
տարների ձեռքում: Աջարիայում և Լազիս
նի հիւսիսային մասերում մի քանի տարի
առաջ ճանապարհորդելիս, թուրք բէգերի
հասարակ մի քանի մոլլաների մօտ տեսա
մի քանի հայ հին ձեռագրներ մագաղաթ
վրա գրած: Իմ բոլոր ջանքերը իզուր անց
ձեռք բերելու համար: Նրանք պատմում
իբրև համայլներ այդ գրքերը խոնաւ պահ
անկիւններում և ոչ մի կերպ չեն համաձայ
վում ծախելու, իսկ գտած իրերը արծաթ
դրամները և այլն զարդերից մի մասը
իսկ մի մասը դեռ ողջ գտնի էին
Վերջապէս նոր գտնված զանազան իրե
ւանուներում տեղաւորելու և հաւաքելու
չունին: Մօտ օրերս Ալեքսանդրապոլի
քում, ինչպէս յայտարարվեց «Մշ
գտնված է մամոնտի ոսկորներ, և
պլիսի գիտուր գտնվում և անհետ
Անդրկովկասի այդ 4 քաղաքներում
բանալը մի զարկ կը տայ հնագիտ
ծին և հայկական կուլտուրայի ծա
շրջանաւութեան ուսումնասիրութ
Մեր պատմութիւնը դեռ խաւարով
Հայկերի և Բէլերի հեքիաթական ա
Այնպիսի կենտրոնական տեղեր
նախկին բնակչութեան վերաբերմամբ
պիտի է Նոր-Բայազէտը, դեռ
անյայտ է, թէ ովքեր էին այդ վայրերի
նակիչները: Պ. Լալայեանցի
մառվայ ընթացքում կատարած
բազմաթիւ արդիւնք են տուել
այնտեղ կարասներ, գերեզմաններ,
քարեայ նկուղների մէջ թաղված
սանիքներ իրանց կուլտուրական
տութեան ձեռքով և իրերով: Այստեղ
կը տեսնէք կանգնած կամ նստած
րի մէջ կմախքներ իրանց գանգերի
կազմերով, քարեայ ընդարձակ գերեզման
մէջ պղնձէ զէնքերով և զարդերով

ժամանել։ Հնագիտական տեսակէտից մեծ արժէք է ներկայացնում պ. Լալայեանցի աշխատանքը և եթէ ընկերութեան նոր բացված հիւղերը նոյն եռանդով շարունակեն իրանց գաւառներում, ցաքուցրիւ տուած բազմաթիւ հնութեան հետքերը քրքրել, և նրանց միջի իրերը մի տեղ հաւաքել, կամ գոնէ աչքի առաջ եղածները ի մի հաւաքել, այն ժամանակ մի քանի տարիներից յետոյ, համեմատական քննական պատմութիւնը մեզ դուրս կը հանի մեր նախապատմական հեքիաթական աշխարհից։ Հայկական աշխարհի օրրանն է այդ 4 գաւառները և այդտեղ են թաղված հայկական կուլտուրայի հետքերը։ Մնում է, որ այդ նոր բացված ճիւղի անդամները, խորը ըմբռնելով իրանց դերը, ամեն կերպ հաւաքեն իրանց գաւառում գտնված շարժական հնութիւնները մի տեղ հաւաքել։ Եռանդը և ցանկութիւնը միացած հրաշքներ կը գործեն։ Բաւական է կանգուն հնութիւնների, ճարտարապետական շինուածքների վրա լոկ զարմանք յայտնել, կամ նրանց անհետանալու վրա վայ տալ, ժամանակ է գիտակից վերաբերմունք ցոյց տալ դէպի այդ բեկորները։ Ինչպէս զեկուցեց պ. Լալայեանցը, Բագուի անդամները ևս ցանկութիւն ունեն մի այդպիսի ճիւղ բաց անելու։ Ազգագրական ընկերութեան ընդհանուր ժողովը սկզբունքով ընդունելով այդ մտադրութիւնը, ցանկալի համարեց որ բագուեցիք իրանք նախաձեռնեն և ապա առաջարկեն հաստատութեան։ Երևի միւս գաւառներն էլ անտարբեր չեն մնայ այս կարևոր հարցի վերաբերմամբ։

Յով. Կարապետեան

ՃԱՆԱՉԻՐ ԴԵՐԴ...

Չը կայ հասարակական կամ այսպէս թէ այնպէս հասարակութեան հետ առնչութիւն ունեցող մի մարմին կամ հիմնարկութիւն, որի իրական կամ ձևական նշանաբանը «արդարութիւնը» չը լինի։ Արդարութեան և ճշմարտութեան անունով են խօսել բոլոր կրօնների հիմնադիրները, բոլոր կրօնական և քաղաքական օրէնսդիրները, բոլոր գիտնականները, հին-նոր փիլիսոփաները։ Արդարութեան և ճշմարտութեան անունով է կամենում յարատևել իր գոյութիւնը բռնապետութիւնը, արդարութեան անունով են երևան գալիս զանազան նորանոր վարդապետութիւններ։ Արդարութեա՛ն գոչելով կրօնի ասպարէզ են դուրս գալիս հինն ու նորը։ Վաղուց կործանվել է չարութեան աստուծոյ բագինը և այժմ Միհրն անգամ արդարութեան դիմակով է ասպարէզ գալիս իր գոյութիւնը շարունակելու...

Չարութիւնը պաշտօնապէս նշաւակութեան սև սիւնին գամվելով, չարագործութիւնները ոչ միայն չը վերացան, այլ բարութեան և արդարութեան քօղի տակ՝ գործունէութեան աւելի լայն ասպարէզ գտան նախճիրներով լցնելու աշխարհս։ Հանրամարդկային թարմ գաղափարների հոսանքը ոչ միայն չը կարողացաւ աւազակութիւններն ու չարագործութիւնները, բռնութիւններն ու մարդասպանութիւնները վերացնել, ոչ միայն չը կարողացաւ մեր ազէտ ամբոխին գիտակցութեան բերել, այլ և ծառայելով որպէս քօղ, դիմակ միջոց, առանց չարերին ընդլայնելու իրանց շահատակութիւնների շրջանակը։ Եւ հասարակութիւնը... Օ՜... ինչ պահանջես յայտնի փիլիսոփայի գեղեցիկ բնորոշած «կծոց»ից...

Բայց և այնպէս, ամեն տեղ, ամեն հիմնարկութեան, ամեն հասարակութեան մէջ՝ արդարութիւն բառն է ձայնվում։ Միակ հիմնարկութիւնը, որ խուսափում է այդ բառից, որ ափաշկարա—բացարձակ կերպով ցոյց է տալիս իր թշնամութիւնը դրա հետ,—դա մեր «Մայր աթոռն» է, ս. Էջմիածինը։ Ս. Էջմիածինը չէ ներկայանում անապատականների մի շարք մութ խցեր, չէ ներկայանում մի դասակարգի արտօնեալ մի հիմնարկութիւն,—նա ներկայացել և ներկայանում է ամբողջ հայ ժողովուրդը—գոնէ այդպէս է պաշտօնապէս. սակայն վերջին տարիներս ինչ որ այնտեղ կատարվում են՝ ոչ միայն առնչութիւն չունին նոյն այդ ժողովրդի ցանկութիւնների ու ձգտումների հետ, այլ բացարձակ հակասում են նրան, թէև ամեն ինչ կատարվում է այդ ժողովրդի անունով, ամեն ինչ յանուն նրա բարիքի։ Մի քանի տարիներ են, որ օգտվելով պառաւած հայրապետի անկարողութիւնից և վատութիւնից, զանազան համբակ և ապիկար «վարդապետիկ»-ներ իրանց ձեռքն են առել ամբողջ ազգը ներկայացնող Էջմիածնի ղեկը և ամեն ինչ խաղք ու խայտառակութեան հասցրել։

Հասկացի՛ր քո մեծ կոչումդ, Էջմիածին, գիտցի՛ր, որ դու այսօր ամբողջ ազգն ես ներկայացնում, մի [illegible] ունեցող, ոտնատակ մի տար կոչումդ, մի մոռացիր դերդ, մի ուրացիր նշանաբանդ, որ է ամենից առաջ արդարութիւնը։

Եւ ժողովուրդը, հայ քրիստոնեայ ժողովուրդը, որ քեզ իր գլուխն է ճանաչում, քեզ իրան ներկայացուցիչը համարում, չէ կարող երկար համբերել... Ճանաչի՛ր դերդ։

—

Մ. Յովհաննեան դպրոցը մի ամիս փակ էր։ Նիւթական ապահովութիւնը կայ, գիտական ույժեր կան, շէնքը պատրաստ կանգուն է, կառավարութիւնը վերցրել է նրա դռներից փակման կնիքը, սակայն հաբերուսը ուսումնածարաւ սանուհիներ վզերը ծռած, փողոցի դռան առաջն էին թափառում և Դաշնակցութեան շէֆերի ու Մելիք-Թանգեան վարդապետիկի հրամանով նրանք իրաւունք չունէին ներս մտնելու։ Ի՞նչու։ Եթէ Լ. Սարգսեան Դաշնակցութեան 16 ամեայ [illegible] գլխին մի հարուած տուեց և այդպէս անխնայ հալածվում է, չէ՞ որ նոյն դաշնակցականներն էին, որ Էջմիածնի պարիսպների մէջ, Էջմիածնի վեհազարմեայ Եհովային և նրա յաջորդներին ջարդ ու փշուր անելու ոչ մի ջանք չը խնայեցին... Հալածում են Լ. Սարգսեանին։ Ինչո՞ւ, անարժա՞ն է իր կոչման, անընդունա՞կ է, օրինաւոր կերպով չէ՞ ընտրված, օրինական կերպով չէ հաստատված։ Առանց պատճառի. միմիայն նրա համար, որ դաշնակցական շէֆերի քէֆն այդպէս է ուզում։ Եւ, Էջմիածինը պարում է նրանց չալած զուռնայի եղանակով, Եւ, հայ ժողովուրդը, Էջմիածին, հայ-քրիստոնեայ ժողովուրդը, որ քեզ իր գլուխն է ճանաչում, քեզ իրան ներկայացուցիչն է համարում, չէ կարող երկար համբերել... Ճանաչի՛ր դերդ։

Լ. Լալեան

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

(Նամակ Խմբագրութեան)

—

Մինչև ցայս վայր պ. Սարուխան սովորական կուսակցական պայքար մղող հականակորդ մըն էր. ասկէց վերջը պարագաները շնորհիւ արդէն մեր թշնամեաց բանակին դրօշակակիր դարձեր է. հրամայական տոնով նրզակ ճռճռացնում է «իսկ այս եղբօրորդին, շեշտում եմ. Հ. Գ. Ն., բացարձակօրէն ոչ մի վստահութիւն չէ վայելում ոչ տեղական հոգևոր իշխանութեան մօտ, ոչ էլ Հռոմում» Հայութեան և ազգային եկեղեցւոյ շահերը պաշտպանելով և մաքառելով լատինութեան դէմ այն մտքով, որով Բենեդիկտոս ԺԴ սաստում էր մոլեռանդն միսիոնարներին չը լատինացնել (latinizzare) արևելեան եկեղեցւոյ կաթօլիկներին. և կամ ըստ մտաց Լևոն ԺԳ-ի պաշտպանելով արևելեան եկեղեցւոյ արժանապատւութիւնը, «վրացի կաթօլիկ» լատին քահանաների ուղղութեան հակառակ, մեզի թշնամիներ շահեցինք թէ Սարաթովում թէ Հռոմում։ Պօղոս տառեան ու Պետրոսեանց կուրիների մէջ թելով իր քաշած վշտերը... և վերջապէս ի սուտ եղբարց ասելով վերջացնում է խօսքը. «եթէ մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի»։ Նոյնպէս և հաւ Գալով ձեր արտասովոր հետաքրքրութեանը, որով ուզում էք իմանալ ակամայից գրչէս ինկած մի քանի բառեր ո՞ւմ հասցէին են ուղղված, ուրպէս զի ապահով կերպով նպատակի մը ծառայեցնէք, բացատրեմ ի հանդիսութիւն ձեր. «Վանդալական աւերմունք» կոչել եմ «Մշակում» № 24 ձեր իսկական անուան ինքնահնար լուրը ինչ ինչ կարգադրութեանց մասին, երկրորդ այն տգեղ կատակերգութեան համար, որ փոքրիկներդ խաղացիք ծերունազարդ հայրապետի սուտերի եռև, յատուկ յանձնարարութեամբ Կովկասէն մանաւոր նամակներով ծանօթ վարդապետների ուղարկված թելադրութեամբ։ Հին ուրուականն՝ դուք հասկանում էք տ. Սարգիսը։ Ոչ. դա մի ընդհանուր կրօնական հարցերի կնճիռ է, որ մըջին դարերից սկսած հիւծեց և մաշեց հայ ազգը։ Հին ուրուականները օտարներն են ազգով, լեզուով և ծիսով։ Եթէ դուք անոնց նմանցուցիր էք տէր Սարգիսը, ցաւալի է, ասացէք թող այդ սուտերի միջէն դուրս գայ և այն առեն կասկածով չէք վերաբերվի դէպի մեր ակնարկութիւնք։ Իսկ եկեղեցական աղուէսը (ով է արդեօք). կարդացէք «կրօնական աղուէս», որ կը նշանակէ մի անձնաւորութիւն, որը իրան դասակարգին չը յատկացուցած պատմուճանով ուզում է շրջել և դրանից էլ ստեղծվում է «զանազան և աննպաստ պարագաներ», որոնք յուզում են մտքերը, անախորժութիւններ են պատճառում և յաճախ թիւրիմացութիւնների աղբիւր ստեղծում։

Բարի խրատ ընդունել թշնամուց անպատւութիւն չէ (հիմա ձեր հարուածը ինծի աւելի օգտաբեր է, քան թէ նախկին համբոյրներ). միայն թէ բարեհամութեամբ լինի և ոչ Եղնկայ ասածի պէս թէ «մի խրատու պատճառաւ թունաթափ լինիր յեղբայրն քո»։

Ընթերցողի յիշողութեան մէջ նորոգելու համար մեր գրածի մտքերը, այստեղ ամփոփում ենք համառօտիւ հետևեալ կէտերը.

1) Մեր և Տէր-Սարգիս Տէր-Աբրահամեանի մէջ չը կայ անձնական թշնամութիւն, կիրք, այլ գաղափարական կռիւ, տարբեր սկզբունքով ու տարբեր ուղղութեամբ. որ են միապետականը և ժողովրդականը. և այդ հետևանք է այն հաստատութեանց, յորում սներ մեծացեր և դաստիարակվեր ենք. Նա Պրօպականդայում, ես ս. Ղազարու վանքում։

2) Գաղտնի թղթակցութիւնք ուղղակի անուղղակի միշտ տեղի են ունեցել լատին և հայ բարձր ու ցածր հոգևորականութեան հետ սկսած այն օրից, երբ բարոն Բռսպ եպիսկոպոսի բանսարկութեամբ մերժվեցաւ հ. Յովսէփ Մարգարեանի թեկնածութիւնը և Տէր-Սարգսի Հռոմից՝ Ռոստով և Բաթում հասնելը և կաթողիկոսի Հռոմից դառնալէն յետոյ նրան Բաթումից յԱխալցխայ տեղափոխվելը։

3) Փոխարքային տուած պետիցիան կազմըվեցաւ ոչ թէ «իմ լաւ ծանօթ բարեկամի» հետ մի մասնական խորհրդակցութեան «բարոյական ճնշման տակ», այլ ինչպէս այն ժամանակ, երբ պ. Սարուխան լիազօրների համագումարի մէջ իրան զգում էր և ազատ և տէր և գլուխ և անօրէն. բայց ժողովականաց իսկական բարոյական ճնշման տակ կարմըրելով ստորագրեց պետիցիան։

4) Կաթողիկոսի անունով առաջարկված ժողովի նպատակն էր իսկ և իսկ խափանել հասարակաց հաւանութեամբ կազմված աղերսագիրը, ոչ անոր համար որ Պօղոս վ. ծեր էր և տգէտ, այլ անոր համար, որ նրա եղբօրորդին հ. Գ. Ն. վտանգաւոր անձնաւորութիւն է, կը յաջողացնէ Կովկասի թեմը ձգել Մխիթարեանց ձեռքը, որ ոխերիմ թշնամի է կարծված լատին ռէժիմին և անոր հաւատարիմ ծառաներին։

5. Արդվինի թեմի վերահաստատութեան համար, ամենքին յայտնի է, որոնք հետաքրքըրվում են այս հարցով, որ ես անձամբ 1903 թ. Գր. վ. Փոչինեանի հետ գնացել եմ Հռոմ խնդրելու զայն ս. պապից։ Հարցը եպիսկոպոսի բնակութեան տեղւոյ վրա է և ես ցոյց տուած եմ Թիֆլիսը։

6. Կաթողիկոսի անձնաւորութեան նկատմամբ թեթև խրթխնքները հետևանք են չարամիտ ակնարկութեան (insinuation), որպէսզի գրգռեն իմ դէմ Հռոմի իշխանութիւնը և հասնեն իրանց գաղտնի նպատակներին...

7. Սարաթովի եպիսկոպոսի գրածը Ախալցխայի հոգ. կառավարութեան, թէպէտ արևմտեան եկեղեցւոյ համար ճիշտ է, բայց ոչ արևելեան եկեղեցւոյ համար, և չեն ըստ մըտաց Լևոն ԺԳ. մեծ պապին։ Դրանով ի հիմանց խախտվում են հայ-կաթօլիկ եկեղեցւոյ և ժողովրդի իրաւունքները...

8. Կովկասում հայ-կաթօլիկաց հարցերի մէջ երեսպաշտութեամբ հաւատարիմ ծառայութիւն չը մատուցանելուս լատին ռէժիմին, պ. Սարուխան սիրտ առած շեշտում է բացարձակօրէն իմ ոչ մի վստահութիւն չը վայելելու մասին լատին մեծաւորաց մօտ։ Բայց միւս կողմանէ լռում է թէ ինչ է մտածում հայ-կաթօլիկ հասարակութիւնը, թէ իմ և թէ իրան մասին։

9. Մխիթարեանք, թշնամիք իրանք խոստովանում են, որ լատին տիրապետութեան դէմ օրինաւոր ճանապարհով կռվելով յաղթեցին. բայց անիրաւութիւնը յետոյ յափշտակեց յաղթութեան պտուղները և տիրացաւ ոչ խղճով և իմաստութեամբ, այլ կեղծելով և խորամանկութեամբ։ Ուր չը հասաւ առիւծենին, կարկատեցին աղուէսնին!

Այս ամենը իրանց զանազան բովանդակութեամբ բերում են մեզի այն եզրակացութեան՝ որ ի սկզբանէ Մխիթարեանց [illegible] ազգասիրական գործունէութեան դէմ բիւրոկրատական ուժերից կազմակերպված էր մի դրամա, որի մէջ մեզի հետ բարեկամական յարաբերութիւն պահողներն աջող տարան միջնորդի դերը և Մխիթարեաններին իբրև քաւութեան նոխազ հանեցին սեղանի վըրա! «Ամենայն ինչ կատարեալ է»։

Հ. Գ. Ն.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, սեպտեմբերի 29-ին։

Տիկին Մամիկոնեան և օր. Ջանջուղազեան, որոնք մինչև 1905 թ. սեպտեմբերը Մոգնու իգական դպրոցի (Могнинское женское училище) վարժուհիներ են եղած՝ Գայեանեան օրիորդաց դպրոցը հայկական վարչութիւնից խլելուց յետոյ, պետական դիրեկցիայի վարչութեան ժամանակ, իրենց գրութիւնով, տպված «Մշակ» լրագրի № 208-ի մէջ, հարկ են գտել հասարակական դատաստանին յանձնելու հայ ժողովրդին վերադարձրած Գայեանեան դպրոցի ժողովրդական հոգաբարձութեան հետևեալ վարւողութիւնը։ Հոգաբարձութիւնը, Գայեանեան դպրոցը վերաբացելու համար ուսուցչական խումբ կազմելիս՝ իր համար ոչ բարոյական և ոչ իրաւական պարտականութիւն չի համարել արտօնեալ ճանաչելու դիրեկցիայի ժամանակվա վարժուհիներին, այլ վարվել է կատարելապէս անկախօրէն, շուրջ 130 խնդրատուների միջից ընտրութիւն անելով իր խելահասութեամբ և խղճի մտօք, համերաշխ գործակցութեամբ իր ընտրած տեսչի։ Ես կարծում եմ, որ հոգաբարձութիւնը, որի մի անդամն եմ ես, կարմրելու ոչինչ չունի իր այդ ձև վարւողութեան համար, և այդ չէ բնաւ դրդում ինձ այս երկտողը գրելու։ Գրութեանս միակ նպատակը մի հերքումն է։ Յիշեալ գանգատաւորները վերագրում են ինձ այսպիսի բան. իբր ես պնդած լինեմ թէ վարժուհիները պիտի օրիորդներ լինեն և ոչ տիկիններ, մինչդեռ, որպէս կարևոր են համարել գանգատաւորները շեշտելու իրենց այս ճիշտ դիտողութիւնը, մեր դպրոցի վարժուհիները իրօք որ, թէև առանց կանխակալ դիտաւորութեան հոգաբարձութեան կողմից, տիկիններ են և ոչ օրիորդներ։ Ես յայտնում եմ, որ, վարժուհիների նկատմամբ գանգատաւորների կողմից ինձ վերագրած հայեացքը երբէք չեմ դաւանած, և երբէք հոգաբարձութեան մէջ վարժուհիների օրիորդ թէ տիկին լինելու մասին խօսք անգամ չի եղած։

Անդամ հոգաբարձութեան Գայեանեան օր. դպրոցի
Ա. Արասխանեան

—

Բագու, 24 սեպտեմբերի

Մեր «դաշնակցական» աղաների բարոյական պատկերը բնորոշելու համար, թոյլ տուէք արձանագրել մի փաստ ևս Բագուի հայոց ծխական դպրոցների կեանքից։

Անցեալ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, երբ ծխական դպրոցների համար ուսուցչական խումբ էր կազմակերպվում, հոգաբարձութիւնս ղեկավարվելով ուսուցիչների, ի հարկէ, ոչ քաղաքական համոզմունքներով, ընտրել էր ի թիւս «դաշնակցական» ուսուցիչների և մի քանի ս.-դեմօկրատներ։ Ընտրութիւնների ժամանակ, կրկնում եմ, հոգաբարձութիւնը, չէր ղեկավարվում ընտրվողների քաղաքական համոզմունքներով։

Ահա, երբ ընտրվեցին ս.-դեմօկրատներ, մի քանի օրից յետոյ ես, իբրև նախագահող (նախագահի բացակայութեամբ), ստանում եմ մի գրութիւն «Դաշնակցութեան» կոմիտէի կողմից, որը առաջարկում է բեկանել այդ ընտրութիւնները, որովհետև ս.-դեմօկրատներ են ընտրվել, և նշանակել նոր ընտրութիւններ. ես և հոգաբարձութիւնը ի հարկէ, մերժում ենք այդ առաջարկութիւնը ի մեծ դժգոհութիւն «դաշնակցականների»։

Այդ իմ վարմունքի հետևանքը լինում է այն որ՝ «դաշնակցականները» մի քանի շաբաթից յետոյ, Մարդասիրական Ընկ. ընդհանուր ժողովի ժամանակ, մեծ քանակութեամբ անդամներ գրաւելով՝ ինձ սևացնում են վարչութեան անդամ վերընտրվելիս։

Փոխ.-Նախագահ Բ. Հ. Մ. հոգաբարձութեան՝
բժ. Գ. Սարգսեանց

—

Մաշանջիւղ գիւ. Էջմ. գաւառ. սեպ. 24 ին

Յարգոյապատիւ պ. խմբագիր, աղերսագին խնդրում եմ ի սէր արդարութեան պաշտելի «Մշակի» մէջ տպէք հետևեալը։

Ամսիս 22-ին եկաւ երկու բեղ փափախաւոր զինւորների հետ մեր տունը Վարդան Տօնապետեանը և ասաց որ Բասարի կոմիտէի կարգադրութեամբ պէտք է 25 ր. տուգանք տաս և եթէ չը տաս, տանելու եմ կոմիտէի մօտ։ Երբ հարցրի ինչո՞ւ, ասաց, որովհետև դու «Մշակ» ես կարդում, որը մենք քեզ արգելել ենք։ Մնացի զարմացած այս տեսակ ապօրէն վարմունքի համար, բայց որովհետև ես այդպիսի գումար չունէի, ինձ զինւորներով տարան կոմիտէի մօտ։ Կոմիտէի մեծը՝ տեսնելով ինձ, ասաց. «շան որդի» ես քեզ չեմ ասել, որ այդ լիրբ «Մշակը» չը պէտք է կարդալ և հրամայեց ինձ բանտարկել մինչև 25 րուբլի տամ և տարան բանտ։ Կինս լսելով այդ մասին, գնացել էր եղբօրից առել էր փողը, տուել կոմիտէի մեծին, որ և արձակեցին և պատուիրեցին միւս անգամ չանել այդ բանը, այսինքն «Մշակ» չը կարդալ թէ չէ կը սպանեն։ Հիմա խընդրում եմ թող հասարակութիւնը դատէ, սա վայրենութիւն չէ՞, ինչպէս 60 ամեայ մարդուն այդպէս չարչարեն մի չնչին բանի համար. միթէ մարդ ինչ լրագիր կարդայ, պիտի կոմիտէին ասի. սա էլ է ազգային գործ։ Ես բողոքում եմ սրա դէմ և խնդրում եմ սրան մի հար անէք պ. խմբագիր. ուրիշ բաներ էլ ունեմ, պ. խմբագիր, ասելու, բայց շատ եմ վախենում ինձ սպանեն։

Առաքել քահ. Մարտիրոսեանց

—

Թիֆլիս, սեպտեմբերի 28-ին

Խնդրում եմ «Մշակի» համարներից մէկում տեղ տալ երկտող նամակիս Նոր-Նախիջևանում հրատարակվող «Նոր-Կեանք» թերթի № 12-ի մէջ զետեղված մի յօդուածի առիթով, ուր ճշմարտութիւնը խեղաթիւրված է։ Մեզանում այսօր գաղափարների այնպիսի շփոթութիւն է տիրապետում, որ ամեն սրբութիւն ոտի տակ է տրվում օր ցերեկով և ոչ մի զօրեղ բողոք տեղի չէ ունենում, ամեն մի օրէնք խախտվում է առանց պատժի, սուտը ու ճշմարիտը խառնվել են իրար և որոշող չը կայ արդարն ու մեղաւորը։

Վերոյիշեալ թերթում մի ծածկանուն յօդուածագրել է մի յօդուած Բիշնև քաղաքում Էջմիածնապատկան կալուածքի կապալի առթիւ, ուր դրուատելով Ներսէս եպիսկոպոսի վարմունքը այս գործում՝ միանգամայն անիրաւացի կերպով վարկաբեկ է անում սինոդի անդամներին և բացարձակ կերպով մեղադրում է նրանց կաշառակերութեան մէջ։ Չենք կարծում, որ Բիշնևի սրբազան առաջնորդը, որի մասին առանձին գովասանքով խօսում յօդուածագիրը, գիտակից լինի այս անհիմն և զրպարտական յօդուածին։

Գործի էութիւնը հետևեալն է։ Բիշնևի կալուածքը, որ առաջ շատ չնչին եկամուտ էր բերում, մի քանի տարի սրանից առաջ տրվել է մի հրէայի 20 տարով և Էջմիածնին շատ ձեռնտու պայմանով, որի հիման վրա կապալառուն պարտական է տարեկան 15 սաժէն նոր շինութիւններ կառուցանելու և տարեկան [illegible] հազար րուբլի կապալավարձ տալու։ Այս տարի կապալառու Բէյգելը բազմաթիւ խնդիրներով դիմել էր թէ Վեհ. Կաթողիկոսին և թէ սինոդին, ուր նա պատմում թէ Բիշնևում տեղի ունեցած անկարգութիւնների շնորհիւ մեծամեծ վնասներ է կրում և խնդրում է միջոց տալ պայմանը կատարելու, այն է երկարացնելու պայմանաժամը և մի քանի տարի կապալավարձի մի մասը յետաձգել յետագայ տարիներին վճարելու։ Այս էր ըստ էութեան Բէյգելի խնդիրները։ Սինոդը բացառապէս մերժել է այս խնդիրները, բայց որովհետև տեղեկութիւն չունէր Բիշնևում կատարված իրողութիւնների մասին՝ երկրորդ անգամ յետաձգեց վեց հազար րուբլու վճարը, որ այսօր արդէն ստացված է։ Ոչ ոքի գաղտնիք չէ, որ Բիշնևում բազմաթիւ պօգրոմներ են տեղի ունեցել, ուստի և շատ բնական է, որ սինոդը ինքը կամեցաւ իմանալ թէ ինչ դրութեան է կալուածքը. արդեօք կապալառուն կը կարողանայ շարունակելու պայմանը կատարել թէ նա կը ժողովի [illegible] և չի կատարի իր պարտականութիւնները։ Սինոդը բազմաթիւ խնդիրներ [illegible] շատ խելացի և բնական մի որոշում միայն կարող էր անել—այն է նիւթ հաւաքել և խնդիրը ուսումնասիրել։ Այս պատճառով սինոդը ըստ էութեան մերժելով կապալառուի խնդիրը՝ բոլորովին ինքնաբերաբար և ոչ թէ Բէյգելի խնդրի համաձայն (այսպիսի խնդիր չը կայ) հրամանագրեց սրբազան առաջնորդին մի յանձնաժողով կազմել և բոլորովին մանաւոր ուսումնասիրութիւն կատարել ու պատասխանել մի քանի հարցերի։ Մասնաժողովին չէ մասնակցել կապալառուն և նախագահել է սինոդի անդամ սրբազան [illegible] եպիսկոպոսը։

Բայց ահա թէ ինչ է գրում յօդուածագիրը։ Ազգային շահերի սուտ նախանձախնդիրը պարոնը գրում է թէ «հրէան Բիշնևում առաջնորդից ոչ մի զիջողութիւն անել չը կարողանալով դրպանները բեռնած շտապում է Էջմիածին իր պահանջներով և ահա սինոդը հրամայում է կօմիսիա կազմել. կօմիսիան կազմվում է, որի մէջ էին և հրէայի խաթրը պահողները»։

Մի ուրիշ տեղ յօդուածագիրը ասում է որ սինոդը հրամանագրել է ս. առաջնորդին զիջող լինել և միւս վճարների մասին։ Այս բոլորը սուտ և զրպարտութիւն։ Բէյգելը խնդրել կազմել կօմիսիա, այլ սինոդը գործը հիմնաւոր լուծելու համար ինքն է կամեցել իմանալ իր կալուածքի և իր կապալառուի դրութիւնը. սինոդը չէ հրամանագրել զիջող լինել այդ մասին և ոչ մի խօսք, այլ միայն սեպտեմբերի 15-ը յետաձգել էր միմիայն մի վճար, որ և ստացել է։ Իմ երկու գրաւոր զեկուցումների հիման վրա սինոդը մերժել է ըստ էութեան Բէյգելի գլխաւոր պահանջները, որովհետև իմ կարծիքով դատաստանական ճանապարհով նա չէ կարող Էջմիածնից ոչինչ հանել ոչ մի ժամ։ Բայց աւելի հաստատ [illegible] պէս ապագայում գործը հիմնաւորելու նպատակով սինոդը այժմ գործը յանձնել է Թիֆլիսի փաստաբանների ուսումնասիրութեան, որոնք իմ մասնակցութեամբ զեկուցում պիտի գրեն սինոդին։ Այս բոլորից պարզ է, որ սինոդը միանգամայն կոռեկտ կերպով է վարվել, ոչ մի շնորհ չէ արել հրէային, ուստի բոլոր վերոյիշեալ մեղադրանքները սուտ զրպարտութիւններ են։ Բայց թէ որքան [illegible] գործ է հրէայի հասցէին ամեն տեսակ վիրաւորանքներ գրելը և ցանկանալ, որ Էջմիածինը իր շահերը պաշտպանելուց դուրս կամենայ օգտվել ուրիշի դժբաղդութիւնից, այս մասին թող դատէ հայ հասարակութիւնը, իսկ ես անձամբ հրաժարվում եմ հասկանալ մինչև անգամ այսպիսի մի ազգասիրութիւն։

Երդուեալ հաւատարմատար՝
Գ. Ենգիբարեան

—

Սուխում, սեպտեմբերի 18-ին

«Մշակ»-ի № 192-ի մէջ Սուխումի ծխական դպրոցի հոգաբարձութեան վերաբերմամբ մի զեկուցումն է հաղորդված, որը դիտաւորեալ սուտութիւն է, կամ որևէ թիւրիմացութիւն պէտք է համարել։

Որովհետև մինչև օգոստոսի վերջը ես եղել յիշեալ հոգաբարձութեան նախագահ, ինձնից յետոյ նախագահ է ընտրվել Գարեգին Բուլղեան, այնպէս որ Սուխումում Գր[illegible] նախագահ երբէք գոյութիւն չի ունեցել։ Ընդամենը հաղորդում եմ որ Սուխումում կայ միայն մէկ քահանայ և ոչ քահանաներ, ինչպէս այդ յայտնել է ձեզ պ. Գրձէլեան։

Յետոյ՝ այս տարի Սուխումում ծխական դպրոցը չէ բացվում, որովհետև բուն տեղական սակաւամարդ հասարակութիւնը քաղաքի ձրի հող ստանալով եկեղեցու և դպրոցի համար, նիւթական միջոցների պակասութեան պատճառով որոշել է այս տարի միայն դպրոցի աղօթատան շէնքը կառուցանել, որպէսզի իր բանայ հողին, որովհետև այդ հողը տրված է քաղաքից այն պայմանով, որ եթէ 3 տարւայ ընթացքում նրա վրա շինութիւն չը կանգնեցնեն, նա յետ կառնվի։

Թէ ինչու աշխատել են ձեզ և հասարակութիւնը խաբեբայաբար մոլորեցնել, այդ պատճառների բացատրութիւնը թողնում եմ ձեզ և հասարակութեան։

Հաղորդելով ձեզ վերոյիշեալները խնդրում եմ հրատարակել ձեր թերթում այս նամակս։

Բժ. Միք. Զարգարեանց

—

Թիֆլիս, սեպտեմբերի 22-ին

Վերջին օրերում, Գանձակում լուրեր են տարածվել, թէ իբր իմ և Ա. Գ-ի ու նրա ընկերների մէջ ծագած մի քանի անախորժ վէճերը լուծելու համար առաջարկված միջնորդ դատարանից ես խուսափել եմ։

Յիշեալ լուրերը բոլորովին անհիմն են, որովհետև միջնորդ դատարանի դիմելու անհրաժեշտութիւնը ես միշտ պաշտպանել եմ և ներկայ րոպէին. ես միայն եղել եմ նրա դէմ, որ շահագրգռված մարդիկ դատաւորներ ընտրվեն, որպէս զի դրանով չը խախտվեն ամեն մի արդար դատարանի հիմնական սկզբունքները։

Այդ ամենը հաստատելու համար, և որպէս զի փարատված լինի ամեն մի կասկած յիշեալ հարցի վերաբերմամբ, խնդրում եմ հրատարակել հետևեալ նամակս ուղղված մի ժամանակ պ. Ա. Գ-ին և նրա ընկերներին յայտնելու համար։

«Խնդրեմ յայտնեք Ա. Գ.-ին և նրա ընկերներին, որ դատաւորներ, Դաշնակցութեան կուսակցութեանը պատկանող, ես չեմ կարող ընդունել։ Յիշեալ կուսակցութիւնը իրան [illegible] է համարում իմ յօդուածից։ պարզ է ամենքի համար և երևում է նրանցից, որ կուսակցութիւնը Գ-ի դատը պաշտպանելու համար դիմել է զանազան միջոցների, համարելով իր սեփական դատը։ Այդ պարզ է նրանց թղթերից ու այն միջնորդներից, որոնք նրանք ստիպել էին ինձ դէմ և զանազան ինձ [illegible] ընդունելու։ Նրանց ինձ դէմ գործ դրած յիշեալ վիրաւորանքն և [illegible] միջոցները նոյնպէս պէտք է լինեն միջնորդ դատարանի քննութեան առարկայ։ Այդպէս շահագրգռված լինելով վէճի հետևանքով, դաշնակցականը չէ կարող օրինակ կերպով անաչառ դատաւորի դեր կատարել։ Ոչ մի երկրում չէ ընդունված, որ մի մարդ իր սեփական դատի մէջ դատաւորի դեր վերցնի իր վրա։ Խնդրեմ յայտնեք պարոններին հետևեալը. Նրանց այն առաջարկութիւնը, թէ այժմ չը կայ մի մարդ, որը չը պատկանի ոչ մի կուսակցութեան, աւելի ես հաստատում է այն որ Գ. շատ հեշտ կերպով կարող է դատաւորներ ընտրել դաշնակցական կուսակցութիւնից դուրս, որովհետև բացի վերջինից ոչ մի ուրիշ կուսակցութիւն վէճի մէջ շահագրգռված չէ։ Երբ Գ. կը յայտնի ձեզ Դաշնակցութիւնը չը պատկանող դատաւորների անունները, ես էլ ինչպէս որոշված է սկզբից, կառաջարկեմ իմ դատաւորների ցուցակը, և գ. [illegible] ընթացքում ես զբաղված լինելով դատարանական գործերով թէ այստեղ, Գանձակում, և թէ Թիֆլիսում (դատաստանական պալատում և այլն) և այդ պատճառով [illegible] այս ամսի 28-ից վաղ չէ կարող տեղի ունենալ։ Իսկ եթէ Գ. և ընկերները կամենում էին, որ դատը աւելի վաղ լինէր, նախկինում էր իմ ընկերների առաջարկութիւնը միջնորդ դատարանի վերաբերեալ պատասխանել շուտափոյթ կերպով և ոչ երկու շաբաթից յետոյ։ Դրանով դատը ուշացնելու պատասխանատուն ես չեմ, եթէ միայն այդ կարելի է ուշ համարել։ 18 սեպտեմբերի 1906 թ.»։

Մնում յարգանօք
Ի. Խօջայեանց

23 սեպտ. 1906 թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կաթողիկոսը միջնորդութիւն է յարուցել Փոխարքայի առաջ թոյլտուութիւն ստանալու [illegible] վարդ. Գասպարեանի Էջմիածնի միաբանութեան կազմի մէջ ընդունելու համար։

—

Ինչպէս մենք տեղեկացել ենք, ելեքտրաքարշի վագօնների երթևեկութիւնը Հաւլաբարի գծով սկսվելու է հինգշաբթի օրը, հոկտեմբերի 5-ին։

—

Մօտ օրերս վրայ [illegible] կալանաւորված 20 հոգուց 17 հոգին արդէն արձակված են, իսկ 3 հոգին բանտարկվել են։

—

Հոկտեմբերի 1-ին, ցերեկվայ ժամի 5-ին, Ելիսաւետինեան փողոցի վրա № 75 տան մօտ, [illegible] վիրաւորվել է Ի. [illegible] տարել են հիւանդանոց և նա հազիւ միայն կարողացել է ասել, որ թշնամի չունի և կարծում է, որ վիրաւորվել է սխալմամբ, ու մեռել է։ Սպանողը յայտնի չէ։

—

Հոկտեմբերի 1-ին, [illegible] ժամի 5-ին, Թամամշեանի քարվանսարայում Շամիլ Մամեդովի և Ֆարադ Աբդինովի բակալէյնի խանութները մտնում են երկու կօզակներ և [illegible] են պահանջում։ [illegible] կօզակներից մէկը վերցնում է [illegible] շիշը, բաց է անում [illegible] է, սկսում է խըմել, [illegible] քացախ է, իսկոյն [illegible] առանց վճարելու [illegible] փողը, դուրս են [illegible] խանութից դուրս է գալիս [illegible] պահանջում է փողը [illegible] իբրև պատասխան [illegible] ջոյնը և ուզում է [illegible] վիրաւորում է. Ֆա[illegible] կօզակն էլ նրա [illegible] ւածով վիրաւորում [illegible] տահաբար անցնող [illegible] կալանաւորում են [illegible] կօմենդանտի [illegible] ժամին մօտա[illegible] ատրճանակի գնդակի [illegible] պատճառ [illegible] Ընդհանուր իրարանցում [illegible] արձակողը կարո[illegible] ոչ ոք չէ վնասվել։

—

Բագուեցի միլլիօնատէր Հ. Զ. Ա. Թաղիևը Թիֆլիսում մահմեդական իգական ուսումնարան հիմնելու համար նուիրել է 25,000 րուբլի։ [illegible] տեղական մահմեդական [illegible] դիր է միջնորդութեան [illegible] Թիֆլիսի քաղաքային խորհրդի առաջ, խնդրելով տալ քաղաքային մի հողամաս [illegible] համար շինութիւն կառուցանելու։

—

Բագու ժամանող Կարսի զինուորական նահանգապետ Մ. Ն. Կանիսկին սեպտեմբերի 26-ին ներկայացել է Բագուի ժամանակաւոր գեն.-նահանգապետ Ֆադէևին։ Խօսակցութիւնը [illegible] է տևել, որի ժամանակ [illegible] ուշադրութիւն է դարձված [illegible] Բագուի քաղաքապետութեան և [illegible] մի քանի հարցերի [illegible] վրա։ Ինչպէս [illegible] յաջողվել է իմանալ «Кавказъ» լրագրին, գեն. Ֆադէևը Բագուի [illegible] վկա[illegible] ազգաբնակութեան [illegible] յաջողվել է իր գոն[illegible] տարվայ ընթացքում [illegible] պահանջել է նաև հա[illegible] անհանգիստ խմբերի [illegible] արտայայտել է, որ [illegible] խմբերն էլ կը [illegible] ութեան ընդհանուր [illegible] դուրս հանել խա[illegible] ասպարէզից չարա[illegible] թէ ազգաբնակութիւնը [illegible] առաջվայ պէս կա[illegible] ներկայացուցիչներին։ («Кавк.»)

—

Երէկ Վերայի հեռախօսում գնդակի հարուածով անձնասպանութիւն է գործել Տամբովեան գնդի շտաբս-կապիտան Ֆուրման։

—

Հոկտեմբերի 1-ի գիշերը, Մաղաթովսկի կղզու վրա գտնված 3 հարուածներով սպանված [illegible] դռնապան Դիմեան Սաֆիէվը։

—

Հոկտեմբերի 1-ին, կայացել է I արական գիմնազիայի ծնողական և կրուժօկի նիստը, մանկավարժական խորհրդի համար ներկայացուցիչ ընտրելու նպատակով։ Քուէարկութեամբ ընտրեցին Դ. Ն. Թումանով, Օ. Դ. Դմիտրիէվ, Ա. Ի. Իվանով, Ն. Պ. Տարատինով, Դ. Ս. Լէվին, Ս. Մատվէյէվ և Ա. Ի. Եռսիլիանի։

—

Մենք ստացանք Ղուբա գաւառի Բիլվար Թաթալոս հայ գիւղի քահանայ Վահան Տէր-Յակոբեանից, «Մշակի» մէջ տպելու համար, մի բողոք՝ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան նախագահի, հոգաբարձութեան դէմ։ Մենք անյարմար ենք համարում տպել այդ բողոքը, որ, ինչպէս երևում է, դառնացած և վշտացած սրտի արդիւնք է, որովհետև տէր-հայրը շատ խիստ և մռայլ գոյներով է նկարագրում նոր հոգաբարձուներին, բայց մեզ պարտաւոր ենք ըզգում հաղորդել տէր-հօր բողոքի բովանդակութիւնը։ Նա հասարակական դատաստանին է յանձնում հետևեալ փաստը։ Կամենալով իր որդուն տալ Ներսիսեան դպրոցը, նա այդ մասին գրագրութեան մէջ է մտել հոգաբարձու պ. Եղիշէ Թոփչեանի հետ, որ խոստացել է օգնել։ Եւ ստանում է պ. Թոփչեանից հետևեալ նամակը.—«Յարգելի տէր-հայր! Վերջին երեք շաբաթը հիւանդ պառկած էի. Էջմիածնից՝ դեռ ժողովը չը վերջացած, եկայ Թիֆլիս և հիւանդ էի։ Ձեր որդու մասին ամեն ինչ հոգացել էի, բայց որքան եղաւ զարմանքս, երբ այսօր տեղեկացայ, որ ձեր որդին դեռ չէ եկել. ինչով բացատրել։ Դպրոցը գիշերօթիկներ չէ պահում, բայց կարելի է ամսական որոշ թոշակ տալ ձեր որդուն։ Ուրեմն նամակըս ստանալուն պէս բերէք ձեր որդուն, որպէս զի տեղաւորենք մի կերպ. ապա թէ ոչ ուշ կը լինի։ Եթէ ուղարկելու մտադրութիւն չունէք, գրեք երկտողով։ Բարևներով՝ Ե. Թոփչեան»։—Քահանան, ծախսելով մօտ 70 րուբլի, վերցնում է որդուն և գալիս Թիֆլիս։ Այստեղ մի շաբաթ սպասելով, նրան յայտնում են, թէ դպրոցը միջոց չունի նրա որդուն թոշակ տալու։ Ինչո՞ւ ինձ խոստումներ տուիք զուր տեղ, գրում է տէր-հայրը, ծախքի և պարտքի տակ ձգեցին այժմ ստիպված պէտք է յետ տանեմ որդուս»։

—

Սեպտեմբերի 30-ին ցերեկվայ ժամը 9-ին, Միջին փողոցում գտնվող Անդրիասեանի ոսկեղէնի և արծաթեղէնի խանութը մտել են 4 զինված չարագործներ և մահվան սպառնալիքով փող և իրեղէններ են պահանջել։ Տիկին Արզումանեանից մերժում ստանալով, չարագործներից մէկը ատրճանակի կոթով խփել է տիկնոջ գլխին։ Տ. Անդրիասեանը չը կորցնելով իրան, բռնել է կողոպտիչներին և դուրս գցել փողոց, աղմուկ է բարձրացրել, որից վախեցած չարագործները ցրվել են, ոչինչ չը կարողանալով վերցնել հետները։

—

Սեպտեմբերի 30-ին, երեկոյեան ժամը 5-ին ելեքտրաքարշի վատման Գալուստ Խաչատրեանը Օլգինսկի փողոցում բռնել է ելեքտրաքարշի վագոնի վրա կախված մի փոքրիկ տղայի, որը վայր ընկնելիս ամբողջ մարմնով ջարդվել է։ Փոքրիկ տղան ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը։

—

«Մինիս և Վէյսի» առևտրական տան կառավարիչ Լէօնիդ-Վէյսը յայտնել է 5-րդ քաղաքամասի ոստիկանութեանը, որ սեպտեմբերի 23-ին յիշեալ ընկերութեան գրասենեակից դուրս է եկել այնտեղ ծառայող Բագրատ Արսենեան Միրզոյեանը և մինչև այժմ գրասենեակ չի վերադարձել։ Սեպտեմբերի 28-ին իմացվել է, որ յիշեալ Միրզոյեանը ստացել է վաճառական Ղարաչէվից «Մինիս և Վէյսի» հաշւիններով 1500 րուբլի։

—

Սեպտեմբերի 30-ին տեղացիներ, Արտաշ Յարութիւնեանը և Իվան Լօլաձէն մտել են Թիւրքահպատակ Յովհաննէս պ. Խաչատրեանի բնակարանը և արկղից գողացել են 320 րուբլի փող։ Չարագործները խոստովանել են իրանց յանցանքը, բայց նրանց մօտ փող չի եղել և վերջինները յայտնել են, որ փողը նրանցից խլել են մի ինչ որ «դաշնակցականներ»։ Յանցաւորները դատի են ենթարկված։

—

Օլգինսկի փողոցում բնակվող պօրուչիկ Պօնոմարենկօն յայտնել էր ոստիկանութեանը որ իր բնակարանից անյայտ չարագործներ գողացել են մօտ 100 րուբլու զանազան իրեր։ Շնորհիւ ոստիկանութեան ձեռք առած միջոցների, յիշեալ իրերը գտնվել են. գտել և յանցաւորին, որը եղել է նոյն տան դռնապան Դ. Նարի-օղլին, ձերբակալել են։

—

Ուսանողուհիներին օժանդակող ընկերութեան վարչութիւնը հրաւիրում է ընկերութեան անդամների ուշադրութիւնը կասսայի չափազանց տխուր դրութեան վրա։ Անցեալ տարի, չը նայելով բարձրագոյն դպրոցների փակման, վարչութիւնը նպաստներ էր տալիս չքաւոր ուսանողուհիներին, թէ դպրոցներում նրանց տեղերը պահպանելու ուսման վճարի և թէ ուրիշ կարիքների համար. այդպիսի նպաստների համար 1905 թւին տրված է 1020 րուբլի։ Իսկ կասսան նոր եկամուտներ չի ունեցել. բարեգործական ներկայացումներ տալը չի աջողվել՝ շնորհիւ ամենքին յայտնի հանգամանքների. ոչ մի նուիրատուութիւն չի եղել և անդամակցական վճարների թիւը կըրճատվելով՝ հասել է մինիմումի։ 1904 թւականի 236 անդամներից 1905 թ. վճարել են միմիայն 36 հոգի, իսկ 1906 թւին՝ 9 հոգի։ Վարչութիւնը ստիպված էր ծախսել թէ անցեալ և թէ ներկայ տարում բացառապէս 1904 թւի մնացորդները, որոնք այժմ բոլորովին սպառվել են։ Բայց այժմ, երբ բարձրագոյն դպրոցների կանոնաւոր գործունէութեան յոյս կայ, նպաստ խնդրողների բազմաթիւ խնդիրները և նրանց բաւարարութիւն տալու անհնարաւորութիւնը ստիպում են մեր ընկերութեան վարչութիւնը դիմելու իր անդամներին և խնդրելու նորոգել անդամակցական վճարումներն անցեալ և ներկայ տարւայ համար։ Անդամավճարները ընդունվում են՝ ընկերութեան նախագահուհի Ե. Ե. Վուրցելի մօտ—Միքայէլեան փողոց, տուն Թումայեանի № 166, փոխ-նախագահուհի Մ. Փ. Կլաուսի մօտ—4 իգական գիմնազիա, Անաստասեան փողոց. գանձապահ Մ. Ա. Իսակովնայի մօտ—Սուղերնայա փողոց տուն 31, և վարչութեան անդամ Լ. Ե. Մուխարինսկայայի մօտ—Վելեամինեան փողոց տուն 3:

Վարչութիւն

—

Բագուի գեներալ-նահանգապետը՝ անցեալ օգոստոսի 15-ին, բաղնիսների ծառայողների մասին արած կարգադրութիւնները փոխելով հետեւեալ որոշումներն է կայացրել. 1) բոլոր բաղնիսատէրերը իրաւունք ունեն կիրակի և տօն օրերը բաց անելու իրանց բաղանիսները, եթէ ցանկանան. 2) ծառայողները պէտք է իրանց աշխատանքները սկսեն առաւօտեան ժամը 6-ից և վերջացնեն գիշերվայ 11-ին: Բայց սրանք իրաւունք ունեն կիրակի և տօն օրերը չը բանել, եթէ ուզեն: Այս որոշումները խախտողները պէտք է պատժվեն դրամական տուգանքներով:

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Սղնախի սուրբ Կարապետ մայր եկեղեցու երէցփոխ և հայոց դպրոցի հոգաբարձու Աղա Ամիրխանեան սեպտեմբերի 1-ին հայոց դպրոցի օրհնութեան ժամանակ իր կատարած անկարգութիւնների պատճառով, որի մասին հաղորդած էր «Մշակին», Թեմիս ս. առաջնորդի կարգադրութեամբ հրաժարեցրած է երէցփոխի և հոգաբարձուի պաշտօններից և հրամանագրված է գործակալին ընտրել նրա տեղ ուրիշ մարդ: Յայտնում ենք խորին շնորհակալութիւն սրբազանին այսպիսի կտրուկ և արդար կարգադրութեան համար: Անցեալ չորեքշաբթի գիշերն անյայտ չարագործներ կողոպտում են Նուկրիանու վրաց ս. Գէորգ եկեղեցին: Մի քանի սրբութիւններ պղծված են: Սղնախի քաղաքային դպրոցի աշակերտները վաղուց դժգոհ էին իրանց տեսչից, որը հեռացնելու նպատակով անցեալ տարի չորս ամիս դասադուլ արին: Տեսուչը կօնկօվ հեռացված է և նրա տեղ նշանակված է պ. Նացվալօվ: Տեղիս Մարիինսկի օրիորդաց դպրոցում ստացվել է հրահանգ, որի զօրութեամբ կրօնի դասատուութիւնն ոչ ռուսազգւան աշակերտների համար այսուհետև պարտաւորեցուցիչ չէ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

30 սեպտեմբերի

ՄՕՍԿՎԱ. 29 սեպտեմբերի: Ռուս-միապետական կուսակցութիւնը անգլիական պատգամաւորութեան գալու առիթով Մեծ-Բրիտանիայի Թագաւորին ուղարկեց մի հեռագիր, որի մէջ յոյս է յայտնում, ոչ Թագաւորը և ոչ էլ անգլիական ժողովուրդը չեն Թոյլ տար իր սահմաններում մի օտարազգի պատգամաւորութիւն, որը իրան Թոյլ կը տար վիրաւորելու Թագաւորին և ժողովրդին. այն անգլիական պատգամաւորութեան մէջ, որը պատրաստվում է գալ Ռուսաստան ողջունելու համար դատարանին յանձնված ապստամբներին. Ցարի հպատակները այդ ընդունում են վիրաւորանք ռուս ազգի համար, հէնց դրա համար միապետական կուսակցութիւնը յոյս ունի, որ Թագաւորը ռուս ժողովրդի ազգային զգացմունքների վիրաւորանքի առաջն կառնի և կարտայայտի իր հակակրանքը պատգամաւորութեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 սեպտեմբերի: Հանգուցեալ Տրէպօվի մարմնի անզամահատութիւնից յետոյ, նկատվեց սրտի մէջ փոփոխումն, որով և բացատրվում է յանկարծակի մահվան պատճառը: Թունաւոր իրեր ստամոքսում չէ գտնված:

ԼՕՁ: Յայտարարված է Պետրակօվսկու, գեներալ-նահանգապ՝տի պարտադիր որոշումը, որով գործարանատէրերին և ֆաբրիկանտներին արգելվում է գործադուլային օրերի համար վճարել բանւորներին, սկսած սեպտեմբերի 27-ից. Ֆաբրիկանտները և գործարանատէրերը, որոնք կը վճարեն բանւորների գործադուլային օրերի համար նոյնպէս առևտրական հիմնարկութիւնների տէրերը, որոնք կոզպեն իրանց խանութները գործադուլի համար, ենթարկվում ե երեք ամսվայ բանտարկութեան կամ 3000 րուբլի տուգանքի:

ԿԱԼՈՒԳԱ, 30 սեպտեմբերի: Ռեազանսկօ-ուրալեան երկաթուղային Սպասօ-Դէմեանսկի կայարանում, գնացքի միջից գողացված է մի պուլէմիոտ իր ամբողջ մասերով:

ԲԵՐԼԻՆ, 30 սեպտեմբերի: «Նորդդէյչէ-Ալգեմէյնէ-Ցէյտունգ»-ում տպված է հետեւեալ հաղորդագրութիւնը. Լոնդոնի «Դէյլի-Մէյլի» լրագիրը Բերլինից ստացաւ մի լուր անթել հեռագիր խփելու հարցերի նուիրված կօնֆէրենցիայի մասին. այդ հաղորդած լուրը ուղիղ չէ, որով և կարող է ժողովների ընթացքի մասին առաջացնել սխալ կարծիք: Կօնֆէրենցիային մասնակցողները բոլորն էլ առանց բացառութեան լուրջ ձգտում են ցոյց տալիս՝ դժուար հարցերին վերաբերեալ հասնեն բաւաբար համաձայնութեան: Նոյնպէս և իրականութեան չի համապատասխանում մի իտալական լրագրի հաղորդած այն լուրը, որ իբր Թէ Գերմանիան գրված ինչ որ միտումներով՝ հակառակ է Մարկոնուն Չէրնօգօրիայի ներկայացուցիչ նշանակվելուն:

ԻՒԶՕՎԿԱ, 30 սեպտեմբերի: Զինւորական-դաշտային դատարանի դատավճռով գիշերը գնդակահարվեցին 6 տէրրօրիստներ. Մնացած 6 հոգին փաստերի բացակայութեան պատճառով-արդարացված են:

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ, 30 սեպտեմբերի: Սահմանադիր-ռամկավարական կուսակցութեան օրգան «Жизнь Крыма»-ի խմբագրութիւնը խուզարկելուց յետոյ՝ կալանաւորված են գլխաւոր աշխատակիցները:

1 հոկտեմբերի

ՎԻԵՆՆԱ, 30 սեպտեմբերի: Կ. Պօլսի լրագրների հաղորդած լուրերի համաձայն Ասսիր-Բէնիչսկի սանճակի սահմաններում արաբական ցեղերը ապստամբվեցան: Ասում են, որ մի շաբաթվայ ընթացքում տաճկական զօրքերի կորուստը հասաւ 100 սպանվածների և 60 վիրաւորվածների. ապստամբների կորուստը—200 սպանվածից աւելի է հաշվում: Տաճկական զօրքերը նահանջեցին: Կ. Պօլսից օգնական զօրքեր են պահանջել:

ԲՐԱՈՒՆՇՎԷՅԳ, 30 սեպտեմբերի: Կումբերլենսկի հէրցօգը դիմեց Բրաունշվէյգի կառավարութեան մի նամակով, որի մէջ նա այն կարծիքն է յայտնում, որ իր Թագաւորին ուղված նամակի մէջ ցոյց տուեց ամենամեծ զիջողութիւն: Հէրցօգը բացասում է պատճառաբանութիւնների կանոնաւորութիւնը, որոնց հիման վրա մերժված է իր առաջարկութիւնը, և մատնանշում է, որ 1885 Թ. միութեան ժողովի վճիռը ուղղված է միայն իր դէմ, և ոչ Թէ իր ընտանիքի անդամների դէմ: Հէրցօգը խնդրում է հրատարակել նամակը և ներկայացնել Բրաունշվէյգի լանդտագի քննութեան:

ԲՈՒԴԱՓԷՇՏ, 30 սեպտեմբերի: Պատգամաւորների պալատում ֆինանսների մինիստրը յայտնեց, որ երկրագործութեան, վերջին երկու տարվայ լաւ բերքի, արդիւնաբերութեան զարգացման և առևտուրի արտահանութեան պատճառով ֆինանսական դրութիւնը բաւարար է: Մինիստրը յայտնեց, որ կառավարութիւնը վճռեց շարունակել գնելու մասնաւոր երկաթուղային գծերը:

ՎԱՐՇԱՎԱ, 30 սեպտեմբերի: Զինւորական-դաշտային դատարանը գիւղացի Մօգէլին մահվան դատապարտեց կախաղանի միջոցով, պահակի վրա զինված յարձակում գործելու պատճառով, որի ժամանակ ծանր վիրաւորեց քաղաքապահին:

ԼՕՆԴՕՆ, 30 սեպտեմբերի: Ռուսաստան պատգամաւորութիւն ուղարկելու առիթով ծագած միջադէպը համարվում է վերջացած: Մամուլը այսօր յոյս է յայտնում, որ այդ միջադէպը չի ազդի անգլօ-ռուսական լաւ յարաբերութեան վրա: «Տայմս»-ը ասում է, որ զանազան կուսակցութիւնների ընդհանուր կարծիքը այն է, որ պատգամաւորութեան ուղարկումը վնաս կը բերէր, և ոչ Թէ օգուտ. այժմ յոյս կայ, որ անգլօ-ռուսական միջազգային քաղաքականութեան Թիւրիմացութիւնը կը հեռանայ: «Դէյլի Տէլէգրաֆ»-ը գրում է, որ միայն վերջին րօպէին նախազգուշացվեց խելափնթոր ակտ կատարելուց. պատգամաւորութիւնը կը վնասէր լաւ յարաբերութիւններին և անգլիական կարծիքի արտայայտիչը չէր լինէր»:

ԿՐԷՄԷՆՉՈՒԿ, 3 սեպտեմբերի: Քաղաքային այգում տեղի ունեցաւ քաղաքական ժողով: Բռնված են 13 հոգի: Գեներալ նահանգապետը 10 հոգուն աքսորեց Արխանգելսկի, և 3-ին Օլօնէցկի նահանգներ հեռաւոր տեղերը:

ԴԵՐԲԷՆՏ, 30 սեպտեմբերի: Աւազակների մօտ գերի բռնված ձկնավաճառ Մօրօվիցկու ազատութեան համար ուղարկված է 5000 րուբլի:

ՄՕՍԿՎԱ, 30 սեպտեմբերի: Կլինսկի գիւղացիների բանակցութեան մէջ են մտել իշխան Մէնշիկօվ-կօրէյշահի հետ գնելու համար նրա 25,000 դեսեատին անդրանկութեան կալուածքը գիւղական բանկի միջոցով:

ՏՕԿԻՕ, 30 սեպտեմբերի: Ի նկատի ունենալով պարլամենտական սեսիաների մօտենալը, օպպօզիցիայի լիդէր Ինուկայկին Եապօնիայի դրութեան մասին մի ճառ արտասանեց: Պատերազմից յետոյ քաղաքականութեան վրա ունեն զանազան հայեացքներ, մի կողմից անհրաժեշտ է համարվում ուժեղացնել զօրքը և նաւատորմիղը, իսկ միւս կողմից պահանջում են ծախսերի մէջ խնայողական լինել: Օպպօզիցիան 15 տարի պատերազմ չէ նախատեսում: Ռուսաստանի ծրագիրներում Մանջուրիան չէ մտնում, հէնց դրա համար Եապօնիան պէտք է ուշք դարձնէ տնտեսական ապրուստի միջոցների զարգացման Չինաստանի մեծած դրամագլուխների շահագործման վրա: Կառավարութիւնը այս հարցի վրա նայում է բացասական եղանակով: Շատ հաւանական է՝ որ նա պարլամենտում տիրող կուսակցութեան հետ միասին զինաւորման քաղաքականութիւն է հետեւում: Հասարակութիւնը անհամբերութեամբ է սպասում նոր բիւջէտին:

ՄՕՍԿՎԱ, 30 սեպտեմբերի: Հոկտեմբերեան կուսակցութեան միացած «Ազատութիւն և Կարգ ու կանոն» կուսակցութիւնը յայտնեց կենդրոնական կոմիտէին՝ կուսակցութեան ընդհանուր ժողովի միաձայն որոշումը—միանալու Գուչկօվի նամակին և յայտնել նրան իր խրախուսանքը: Ռէկտորը մի յայտարարութիւնով համալսարանում յայտնում է, որ համալսարանի վարչութիւնը, իրանից անկախ պատճառներով, չի կարող Թոյլատրել ուսանողների վաղվայ և մօտակայ օրերի ժողովները:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 սեպտեմբերի: Երեկ արտասահմանից գնացքով ժամը 9-ի 50-րոպէ Պետերբուրգ ժամանեցին մի քանի անիշխանականներ. գաղտնի ոստիկանութիւնը, որը առաջ լուր էր ստացել, հետեւեց նրանց մինչև բնակարանը և բոլորին կալանաւորեց, որոնց Թւում է Պետերբուրգի համալսարանի նախկին մի ուսանող: Գտնված մեծ քանակութեամբ պայթուցիկ նիւթեր և 30 ֆունտ դինամիտ:

ՌԻԳԱ, Ցերեկվայ ժամը 1-ին Մոսկովեան արուարձանում չորս զինված չարագործներ յարձակվեցին Մալկօվսկի գործարանի գանձապահ Կուզնեցօվի վրա, որը սեփական իր կառքով, գրասենեակում ծառայող Րէյնմանի հետ տանում էր 20,000 րուբլի: Սպանելով մի ձի և վիրաւորելով կառապանին և Րէյնմանովին, կողոպտիչները սպանեցին կառքից դուրս Թռնող գանձապահին և խլեցին 2000 րուբլի, Թողնելով ոսկիներով պարկը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 հոկտեմբերի: «Россія» լրագիրը իր առաջնորդող յօդուածում, որը նուիրված է հոկտեմբերեան 17-ի միութեան րէզօլիւցիային, մատնանշում է, որ Ռուսաստանի խաղաղ զարգացման իսկական բարեկամները և լայն, սակայն հետեւողական վերանորոգումները՝ համաձայն հոկտեմբերեան 17-ի մանիֆեստի—սպասում էին այդ րէզօլիւցիային, որը պիտի համապատասխանէր նրանց ձգտումներին: Րէզօլիւցիան հրատարակված է. հասարակութեան մի մասը, որը յեղափոխական շարժումը համարում է իսկական ազատութեան և արդիւնաւոր աշխատանքի անհաշտ Թշնամի, նրա միջից կը քաղէ նոր հաւատքի ույժ և իր հայեացքների ճշմարտութեան մասին: Լրագիրը ողջունում է հոկտեմբերեան 17-ի միութեան ծրագրի հաստատակամ և որոշ արտայայտութիւնը, որովհետեւ նրա մէջ ուղիղ կերպով որոշված է իր փոխադարձ յարաբերութիւնները զանազան կուսակցութիւնների և կառավարութեան հետ: Ռուսաց կառավարութիւնը չէ ներկայանում մի որեւէ կուսակցութեան կառավարութիւն. Նա իրագործում է այն ձգտումները, որոնց մատնանշել է կայսրը: Կառավարութիւնը իրան չէ բաժանում հասարակութիւնից, բայց միեւնոյն ժամանակ և չէ հրաժարվում իր վճռողական նշանակութիւնից, և չէ պահանջում, որ հասարակական խմբերը հրաժարվեն իրանց անկախութիւնից:—Ստատս-քարտուղար Նոլդէն նշանակված է Պետական Խորհրդի երկրորդ դեպարտամենտի կազմի մէջ: Գեներալ-ադիւտանտ Ստէսսէլ հիւանդութեան պատճառով արձակվում է պաշտօնից:

ՄՕՍԿՎԱ, 1 հոկտեմբերի: Քաղաքապետը յայտնեց համալսարանի ռէկտօրին, որ անհրաժեշտ է ձեռք առնել վճռողական միջոցներ համալսարանում շարունակվող կողմնակի անձանց մասնակցութեամբ տեղի ունեցող ժողովների դէմ, որտեղ մասնակցում են յեղափոխական մարդիկ, ծախում են արգելված հրատարակութիւններ, յեղափոխական նպատակների համար փողեր են հաւաքվում: Այդ բոլորի հիման վրա քաղաքապետը նախազգուշացնում է ռէկտօրին, որ այդ ժողովների Թոյլատուութիւնը լուրջ պատասխանատւութեան է ենթարկվում, ինչպէս դատարանի նոյնպէս և կարգի պահպանութեան առաջ:

ՀԱՎԱՆՆԱ: Կուբայի ժամանակաւոր նահանգապետ Մօգուն իր՝ ժողովրդին ուղղված մի կոչի մէջ յայտնում է, որ նա ի կատար կածէ Տաֆտի խոստումները և կիրագործէ իր լիազօրութիւնները Կուբայի անկախութիւնը պահպանելու հոգով: Տաֆտը, Բէկօնը և Ֆէնստոնը այսօր գնացին Միացեալ-Նահանգները:

ԼՕՆԴՕՆ, 1 հոկտեմբերի: Լէգիբանկում մինիստր Ասկվիտը իր ճառի մէջ յայտնեց այն միտքը, որ ոչ մի տեղ սօցիալիզմը չունի իր զարգացման համար աւելի քիչ շանսեր՝ ինչ անգլիայում, որովհետև նրա դէմ յուզվում են ժողովրդի բնական զգացմունքները. այնուամենայնիւ մինիստրը յայտնեց, որ ինքը անհատականութեան Թէօրիայի դէմ է: Կառավարութիւնը չի ձեռնարկի մի այնպիսի բանի, որը կարող լինի փոխել գոյութիւն ունեցող սեփականութիւնների յարաբերութիւնները, բայց նա կը գտնի ապահովելու իւրաքանչիւրի աշխատանքի արդար վաստակները:

2 սեպտեմբերի

ՄՕՍԿՎԱ, 1 հոկտեմբերի: «Русская Вѣдомости»-ն հաղորդում է, որ այսօր տեղի կունենայ Մօսկվայի համալսարանի ժողովի նիստը՝ քննելու համար այն դրութիւնը, որը ստեղծել է ադմինիստրացիան իր ձեռնարկած միջոցներով՝ ուսանողների ժողովների վերաբերմամբ: Լրագիրը լսել է, որ ռէկտօրը և նրա օգնականը հրաժարական են տալիս:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ: 1 հոկտեմբերի: Գեներալ-նահանգապետին հասած տեղեկութիւնների համաձայն, որ իբր Թէ քաղաքում սպասվում է ընդհանուր գործադուլ, իր մի հրամանով յիշեցնում է, որ այն մարդիկ, որոնք բռնութիւն գործ կը դնեն անհատի վրա կամ աշխատել ցանկացողներին կը փորձեն խանգարելու, պատասխանատւութեան կենթարկվեն: Բոլոր համախմբումները կը ցրվեն ոստիկանութեան զօրքի ույժով:

ԿԻԵՎ, 1 հոկտեմբերի: Գիշերը տեղի ունեցան մի շարք խուզարկութիւններ: Կալանաւորված են երկաթուղային վարչութեան ծառայողներից մի քանի հոգի, մի ուսանող և մի օֆիցէր, որոնց մօտ գտնված է արգելված գրականութիւն:

ԲԷԼԳՐԱԴ, 1 հոկտեմբերի: Վաղը բացվում են սկուպշչինայի նիստերը:

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ, 1 հոկտեմբերի: Կայարանի մօտ երեկոյեան ժամը 8-ին հինգ զինված չարագործներ մտան Նօբէլի կառավարիչ Մարիօլսկու բնակարանը և կալանաւորելով ծառային, սպանեցին Մարիօլսկուն և խլելով 300 րուբլի՝ անյայտացան:

ՎԻԼՆԱ, 1 հոկտեմբերի: Սեպտեմբերի 28-ի գիշերը Կօվնայում գաղտնի ոստիկանութիւնը կալանաւորեց 17 սօցիալիստ յեղափոխականների և 2 անիշխանականների: Վիլնայում բռնված է սօցիալ-դեմօկրատների ռազմիկ ղեկավար Վօլպէն:

ԼՕՆԴՕՆ, 1 հոկտեմբերի: Լէգիբանկում Ասկվիտը ընդունեց կանանց պատգամաւորութիւնը, որ խնդրում է ընտրութիւններին մասնակցելու կանանց իրաւունք տալ: Ասկվիտը յայտնեց, որ ինքը երբէք չէ կռուել կանանց իրաւունքներ տալու դէմ, բայց ինքը ապացուցված չէ համարում որ կանանց, մեծամասնութիւնն է պահանջում այդ իրաւունքը:

ՔՈՒԹԱՅԻՍ, 1 հոկտեմբերի: Զինւորական-դաշտային դատարանը Կվիրիլայում գնդակահարութեան ենթարկեց Սխիլաձէ և Տալաձէ գիւղացիներին աւազակութեան համար:

ՍԱՐԱՏՕՎ, 1 հոկտեմբերի: Սահմանադիր-ռամկավարների կոմիտէն հասարակութեանը ուղղած կոչի համար պատասխանատւութեան է ենթարկված 129-րդ յօդ. հիման վրա:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 1 հոկտեմբերի: Պետերբուրգում բացվեցին առաջին բարձր գիւղատնտեսական կուրսեր, որոնք պէտք է պահվեն մասնաւոր միջոցներով և գտնվում են հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութեան իրաւասութեան տակ: Կուրսերում ընդունվել են 225 հոգի: Ընդունելութիւնը վերջացած է:

ՊՍԿՕՎ, 1 հոկտեմբերի: Նօվօրժեվում իրանց բնակարանում կողոպտիչների ձեռքով սպանված են Մարկօվսկիները՝ հայր և որդի: Ենթադրված կողոպտիչները Սուշչէվօ կայարանում կալանաւորվեցին: Նրանք վիրաւորելով ուրեադնիկին և ստրաժնիկին անյայտացան:

ՄՕՍԿՎԱ, 1 հոկտեմբերի: Ժամը 2-ին տեղի ունեցաւ համալսարանի ժողովի արտակարգ նիստը: 96 պրօֆէսսօրներից ներկայ էին 57-ը: Քննվում էր այն դրութիւնը որը ստեղծել էր ադմինիստրացիան արգելելով ուսանողների ժողովները: Ռէկտօրը և նրա օգնականը, աչքի առաջ ունենալով անելանելի դրութիւնը, ցանկութիւն յայտնեցին իրանց վրայից վերցնել պարտականութիւններ: Ժողովը ընտրեց մի պատգամաւորութիւն, որը բաղկացած է Մանուիլօվից, Տրուբէցկօյից և Չէրնօվից, որոնք այսօր գնում են Պետերբուրգ լուսաւորութեան մինիստրին զեկուցանելու և իրերի դրութիւնը պարզելու համար: Ժողովը վճռեց համալսարանը փակել մինչև պատգամաւորութեան վերադարձը:

ՀՕՆԿՕՆԳ, 1 հոկտեմբերի: «Կանտօն» շոգենաւը, որը կանգնած էր ափի մօտ, այրվեց: Հարիւրաւոր չինացի ճանապարհորդներ կրակի բոցերին զոհ գնացին: Եւրօպացի ճանապարհորդները և ծառայողների կազմը ազատված են: Այրվեց արժեքաւոր ապրանքը:

ԴՐԱԶԻՆԻԱՆ, 2 հոկտեմբեր: Մինիստր Կլէմանսօն ճաշկերոյթում իր մի ճառով դիմեց ձախակողմեան կուսակցութիւններին աջակցելու՝ ստեղծելու նոր հասարակական կարգ: Կլէմանսօն յայտնեց, որ դրա համար հարկաւոր չէ լինել սօցիալիստական վարդապետութեան ծայրահեղ կուսակից: Կլէմանսօյի խօսքերով, ֆրանսիացիները իրաւունք ունեն անկախ միջազգային Թէօկրատիայի ծառայութիւններից, ի կատար ածել Ֆրանսիայի ճակատագիրը. և Թէօկրատիայի բոլոր փորձերը՝ խանգարելու հանրապետութեան խաղաղութիւնը՝ կը հանդիպեն դիմադրութեան:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութեան:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ի. Կ. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Օ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Գ. Յ. Գուրգենօվ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան:
Ա. Մ. ՓՈՂՈՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.:
Խ. Գ. ԱԲԵԼԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.:
Վճարը 50 կ.: չքաւորները ձրի: Համախորհրդի (գօնսուլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Լոյս տեսաւ
ԸՆԿԵՐ
Լ. ԼԱԶԵԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԱԾՔ
Գինը 15 կոպ.
Գումարով ցանկացողներին 50 օր. 20%, 100-ը 25%, 200-ը 30% զիջումով. առանց ճանապարհածախսի: Կարելի է և վերադիր:
Դիմել՝ Вардану Чиниджянъ фото-цинкографію С. Согомоняна Тифлисъ.
(հ. կ. ե.) 3—5

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄ
արծաթից շինված,
որպէս զարդ ժամացոյցի շղթայից կախելու համար:
Գինն է 3 րուբլի ճանապարհածախսով:
Ապառիկ և վերադիր վճարով
ՉԷ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ:
Դիմել՝ Тифлисъ, Веляминовская 24, В. Варданяну.
(ե. հ. կ.) 7—10

«Ղափանի Շրվենանց գիւղից Շուշու Թեմական դպրանոցի աշակերտ Հայրապետ Մ. Ղազարեանցը բոլորովին չքաւորութեան ճանկերին մատնված լինելով՝ միանգամայն հակառակ իր բուռն ցանկութեան՝ Թողնում է ուսումը: Սրանով ողորմած բարերարների ուշադրութիւնն ենք հրաւիրում և աջակցութիւնը»: Հասցէն՝ Шуша Арм. дух. Семинаріи уч. V-го к. Айрапету Газарянцу
(ե. հ. կ.) 4—5

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆ
I
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
Ռուսերէնից հայերէն
Գինն է 8 ր., փառակազմ 9 ր. 25 կ., ճանապարհածախսով 10 ր. 25 կ.: Հեղինակին դիմողները ճանապարհածախս չեն վճարում:
II
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
Հայերէնից ռուսերէն
Բաժանորդագրութիւնը շարունակվում է: Բաժանորդագինն է 5 ր., առաջին բառարանիս բաժանորդների և գնորդների համար 4 ր.:
III
ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ
Բաժանորդագինն է 2 րուբ. 50 կոպէկ:
Դիմել ուղղակի հետեւեալ պարզ հասցէով. Тифлисъ, А. Дагбашяну.
Ծանօթ. Ռ.- հ. բառարանի յաւելուածը ուշ լոյս կը տեսնէ: Բառարանը պէտք է կազմել տալ:
(կ. ե.) 2—2

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8, կանանց համար 12—1 ժամը:
Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Պասկեվիչի փողոցների,, № 33/15:
(ա. օ.) 21—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպեկտի և Կաղեստակայեա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կաղեստակի փողոցից № 2.
(ա. օ.) 245—300

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Հոկտեմբերի 8-ին, Գայանեան դպրոցի դահլիճում, (Պասկեվիչա փող. № 13) առաւօտեան ժամը 11 ին, կայանալու է Հայուհեաց Որբախնամ ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը:
Ընդհանուր ժողովի զբաղմունքները լինելու են:
1) Հաշուետւութիւն ընկերութեան հիմնադիր անդամուհիների կողմից:
2) Ընտրութիւններ, ընկերութեան ամբողջ վարչական կազմի, ըստ կանոնադրութեան §§ 21 41, 42 և 43-ի:
3) Կը քննվեն և մի քանի ընթացիկ հարցեր ընկերութեան վերաբերեալ:
Եթէ անդամների որոշ Թիւը ներկայ չը գտնվի, ժողովը կը յետաձգվի և կը կայանայ հետեւեալ կիրակի, հոկտեմբերի 15-ին:
(ե. հ. կ.) 1—3

Մելիտօպօլի ս. Աւետման եկեղեցու համար հարկաւոր է մի ձայնաւոր դպիր, որ ծանօթ լինի եկեղեցական ամբողջ երգեցողութեան: Տարեկան ռոճիկ 240 ր. և անտունք տարեկան ոչ աւելի 200 ր. և ճանապարհածախք: Դիմել Мелитополь. Тавр. губ. священ. Гавріэлу Турпаянъ կամ Ктитору Степанъ С. Маденову.
1—6

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը առաւ. 10—12 ժ.
երեկոյեան 6—7 ժ.
Տելեֆօն № 1087
Սօլօլակ, Լերմոնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 18—150

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Կ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է բերանի և ատամների հիւանդութիւն ունեցողներին. պատրաստում է արուեստական ատամներ, քիմք, քիթ և անդամահատված ծնօտների պրօթէզներ:
Ընդունելութեան ժամերը 9—2 առաւօտեան և 4—6 երեկոյեան:
Հասցէն՝ Վանքի և Բարօնսկի փողոցների անկիւն № 10: (ա.օ.) 15—30

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ“
մականունով: Գները 70 կոպէկից մինչև 2 րուբլի: Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով:
Ալէքսանդր Յարութիւնով
(հ. կ. ե.) 14—100

ԲԺՇԿԱՊԵՏ
ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախ. օրդինատոր Մօսկվայի համալսարանի կլինիկայի
Մասնագէտ միզանցքասեռական, վեներական (սիֆիլիս) և կաշուի հիւանդութիւնների ընդունում է առաւօտեան ժամի 11-ից—12-ը, երեկոյեան 5-ից մինչև 7-ը. Սօլօլակ, Ռտիշչևսկի փողոց տուն № 1, «պօժարնի կօմանդի» դիմաց, տելեֆօն № 117: 10—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
Առաքել Նալբանդեանի
ԱՌԱԿՆԵՐ
գինն է 50 կ.
Ծախվում են «Կենտրօնական» և «Գուտենբերգ» գրավաճառանոցներում: 4—6

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ
լոյս են տեսել
կրօնի հետեւեալ դասագրքերը.
Աշակերտական բաժին
1) Դասատետր կրօնի՝ ա. տարի 25 կ.
2) » » բ. » 20 կ.
3) » » գ. » 30 կ.
4) Հին-ուխտ . . . 35 կ.
5) Նոր-ուխտ . . . 40 կ.
6) Գործք առաքելոց . . 40 կ.
Ուսուցչական բաժին
1) Մեթոդիկայ Հին-ուխտի 1 ր. 75 կ.
2) » Նոր-ուխտի 2 ր. 5 կ.
3) Ուսուցումն քր. կրօնի Դ. 1 ր. 50 կ.
4) » » » Ե. — 50 կ.
5) Տան պատուիրան . — 50 կ.
Ցանկացողները կարող են դիմել՝
1) Սահակ քահ. Սահակեանցին, Комерч. училище.
2) «Գուտենբերգ» գրավաճառանոց,
3) Կենտրոնական գրավաճառանոց (центральная).
Ինձ դիմողները ստանում են վերոյիշեալ տոկոսը:
Սահակ քահ. Սահակեանց
(ե. հ. շ.) 7—

Լոյս տեսաւ և վաճառվում է
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՑԻԹՈՂՑԵԱ
(Ֆենիկս Ռենեսանս)
„ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՄԵՂԵԴԻՆ
(Թարգմանական և ինքնուրոյն բանա
ծութիւնների ժողովածու)
Գինը 30 կոպ. ճանապարհածախսով
100-ից աւելի գնողներին 20% զեղչ.
գնողին 10%:
Դիմել Թարգմանչին՝ Александрополь
гайосу Цитохцяну. 9—

ՄԻ ՕՐԻՈՐԴ
և
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ցանկանում են որևէ պաշտօն ունենալ
գիններում, գրասենեակներում, կամ
տերսկում. օրիորդը կարող է ընտանիք
դաստիարակչուհի լինել: Հասցէն՝ Се
ская ул. № 18, кв. Агаханяцъ.

ԼԱԶԱՐԵԱՆ
ճեմարանաւարտ
մի երիտասարդ տալիս է ԴԱՍ
Դիմել «Մշակի» խմբագրութեան, կա
Аргутинскій тупикъ соб. д. № 6., 5

Ժողովեցէք ամեն տեսակ ոսկ
և վաճառեցէք
Եկատերինօդարում գտնվող «Կոպ
սօսինձագործ ընկերութիւն»-ը պատ
յայտնել ի գիտութիւն ընդհանուրի,
Թիֆլիսում բացել է մի պահեստ՝ գնի
մեն տեսակի ոսկրներ. կը գնվի անսահ
փակ չափով: Տեղեկութիւնների համար
Միքայէլեան փողոց, իշխան Վարանցօվ
ձանի դիմաց. Յարութիւն Զալախեանի
(հ. շ. ե.)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շէրմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն
ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը:
նեան հրապարակ, տ. Գուրգէնովի № 7
դէմ նոտար Մղերովի:
(ե.հ.շ.) 60—

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթեւեկութիւնը)

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)

	Փօստային	Մարդատար.	Արագ.	
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ.
Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ.
Ալէքսանդրապօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4
Ալէքսանդրապօլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	
Կարս հասնելը)	4 » 23 » »	—	—	

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձանց համար
(Баку, уголъ Красноводск. и Меркурьевск. д. Набатовыхъ)
Կուրսերի նպատակն է տալ ուսանողներին մասնագիտական եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստա
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական Թուաբանութիւն և Թուաբանութ հաշուիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական Թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա:
Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայնօր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը:
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) տրվում և ուղարկվում են ձրիաբար: Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову.
(ե. շ.) 25—30

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5